

## Գառնիի տաճար

Տաճարի կառուցման ստույգ ժամանակ յատնի չէ. սակայն շինութեան ճարտարապետական- կառուցողական արևեստի. մատենագրական վկայութիւնների եւ վիճակն միջերի ուսումնասիրութիւնից հետեւում է. որ կառուցել է 1-ին դարի երկրորդ կեսին (66-ից յետոյ):

Քրիստոնեական կրօնի ընդունումից յետոյ տաճարի շէնքը ծառայել է աշխարհիկ նպատակների. Ըստ Մովսէս Խորենացու, այն հանդիսացել է Տարդատ 111 թագաւորի (287-330)քրոջ՝ Խորովադուխտի «հովանոցը»:

Տաճարը կանգուն վիճակում մնացել է մինչեւ 17-րդ դարը խորտակել 1679-ի երկրաշարժի ժամանակ: Այնուհետեւ նրա ակերակներն իրենց վրայ են բեռեռում հայրենի եւ օտար բազմաթիւ մասնագէտների ուշադրութիւնը (Շարդեն. Մորիեր, Կեր-Պորտեր, Դիւբուա, Տելֆեր, Շանուր, Շնապէ, Մառ, Սմիռնով, Թորամանեան, Ռոմանով, Բունիթեան, Տրեւեր, Մանանդեան եւ շատ ուրիշներ):

Մակայն յուշարձանի գիտական առաւել հանգամանակից ուսումնասիրութիւնը սկսեց 1909-1911 թականներին, տաճարի շրջապատում ակադեմիկոս Ն. Մառի ձեռնարկած պեղումների ժամանակ: Ծանաչած գիտնական Ֆրեդրիկ Դիւբուա Դե Մոնպերտի 1834- ին կազմած Գառնիի տաճարի վերակազմութեան անդրամիկ նախագործին յաջորդեցին Ն. Մառի արշաւախմբի ճարտարապետ Կ. Ռոմանովի՝ 1912-ին եւ պրոֆ. Ն. Բունիթեանի՝ 1933-ին կազմած վերակազմութեան նախագծերը:

Վերջին տարիների ուսումնասիրութիւնների շնորհիւ ձեռք բերած նոր միջերի հիման վրայ, 1958- ին տողերիս գրողը կազմեց նոր նախագիծ, հրով էլ, հեղինակի ղեկավարութեամբ իրականացեց տաճարի բնականում վերականգնումը (1969-1975):

Ն. Մառի կատարած պեղումների ժամանակ, տաճարի սկզբնական կառուցածքից պահպանել էին հարթակը (պողիւմը), սիւնաշարքի մի քանի խարխիւսները եւ դահլիճի յիւսիս արեւմտեան պատի մի փոքր հատուածը:

1930-ական թականներին պրոֆ. Ն. Բունիթեանի ղեկավարութեամբ կատարեց տաճարի սկզբնական կառուցածքի մասնակի վերաշինում, որի ժամանակ շարեցին դահլիճի պատերից մի քանի շարք, աստիճանների մի մասը եւ մուտքի ներքեւի հատուածը: Վերականգնման ժամանակ ակադեմիկոսները հեռացեցին, եւ շինարարական աշխատանքները սկսեցին շէնքի այն մակարդակից, որպիսին գոյութիւն ունէր Ն. Մառի պեղումների ժամանակ: Շինարարութիւնը կատարեց տաճարի սկզբնական կառուցածքում կիրառած տեխնիկայով: Պակասող քարերի փոխարեն տեղադրեցին բարձր որակով մշակած համանման քարեր (Գառնիի որձաքար), սակայն այնպէս, որպէսզի նկատելի լինի հնի եւ նորի տարբերութիւնը (քանդակագարդ բեկորների լրացումը կատարեց առանց քանդակների. նոր քարերի վրայ միաժամանակ փորագրոււմ են վերականգնման ժամանակը՝ 20-րդ դարը յիշատակող յատուկ նշան): Կոտրատուած բեկորները միացում էին յատուկ սուսնով (Էպոքսի-դային խեժ). բայց, քանի որ սուսնի երկարակեցութիւնը դեռեւս անհայտ է. քարերի առանձին մասերը իրար հետ կապեցին նաեւ երկաթյա զամերով:

Այսպիսով տաճարը լիովին վերականգնեց. իրականացավ մեր ժողովրդի, մեր մշակոյթի մեծերի բարի ցանկութիւնը: Նախաքրիստոնեական ժամանակաշրջանի այս եզակի կոթողը իր կառուցումից ճիշտ 1900 տարի յետոյ, վեր խոյանալով 300-ամեայ ակերակների կոյտից նորից ստացաւ իր սկզբնական հրաշակէտ տեսքը:

Տաճարի սիւնազարդ կառուցածքը, որ կանգնեցւած է ամբողջի հարաւ - արեւելեան հատուածի բարձունքի վրայ, վեհօրէն ներդաշնակոււմ է շրջապատի հիասքանչ բնանկարին: Հրանդանից ցած՝ ակելի քան 300 մետր խորութեան վրայ, հիմաւորց Ազատ գետն է մեղմ աղմկում, շուրջը երկինք են ձգում Գեղամա լեռները:■

## «Գառնիի տաճարը Ալեքսանդր Սահինեանի անմահութիւնն է»

### Լարիսա Յովհաննիսեան

Երէկ Հայաստանի ճարտարապետների միութիւնում հաւաքուած ճարտարապետները, արեստագետները, գրողները ու գիտութեան ներկայացուցիչները նշեցին ճարտարապետական գիտութեան երախտատու Ալեքսանդր Սահինեանի ծննդեան 90-ամեակը:

Յորելեարը 72 տարեկանում (ծնել է1910թ.)հեռացաւ իր հարազատներից, ընկերներից, սակայն յուշ-ցերեկոյթի մասնակիցների համար մեծ գիտնականի ու Մարդու բացակայութիւնը գուտ Ֆիզիկական էր:

ՀՀ ԳԱԱ արեստի ինստիտուտի տնօրէն Լեւոն Հախվերդեանը, ներկայացրեց Ալեքսանդր Սահինեանին որպէս գիտնական եւ ուսուցիչ. «Մեծ մարդ էր, խոշոր անհատականութիւն եւ լաւ հայ: Չգիտեմ ինչ է կազմութիւնը: Մեծ էր ու պարզ: Գառնի վերականգնելու ժամանակ նա բանորի հետ բանոր էր, քարտաշի հետ՝ քարտաշ: Յաճախ կարելի էր նրան տեսնել փոշակոյու, քարտաշի հետ գործ անելիս կամ պատշարին օգնելիս: Գառնիի տաճարը հայկական հելլենիզմի գլուխգործոցն է: Գառնի ճարտարապետի անմահութեան յուշարձանն է», - ասաց Լեւոն Յախվերդեանը: Նա պատմեց, որ. «Պակասող քարերից մէկը, որը շատ կարեւոր էր, ճարտարապետը ոչ մի կերպ չի կարողանում գտնել: Փոտրոտքի օրերին երազ է տեսնում, եւ նրան ասում են.«Ամէն օր տաճար գնալիս ճանապարհին ոտքդ մի քարի է կայում, փորիդ այդտեղ ու քարը կգտնես»: Իրօք, առաւօտեան ճարտարապետը փորում է երազում նշած տեղը ու գրտնում տաճարին պակասող կարեւոր քարը:


Ակադեմիկոս Վարազդատ Յարութիւնեանը հետից սկսեց իր պատմութիւնը: Թիֆլիսի Ներսիսեան ճեմարանն աւարտած Ալեքսանդրի հետ 1926-30 թ.թ.աշխատել են Ալավերդու շրջանի Ծոճակ գիւղում, յետոյ սովորել են Երեւանի շինարարական (յետագայում՝ պոլիտեխնիկական) ինստիտուտում: Յետոյ, տարիների ընթացքում, երկու ճարտարապետների ճանապարհները միացել են ու բաժանել:

Ակադեմիկոսը բարձր գնահատեց Ա. Սահինեանի ականջը հայ ճարտարապետութեան պատմութեան ուսումնասիրութեան գործում: «Երեւոյթի բազիլիկան»,

Շար. էջ 9 ում

Էձօ՞ն ԿՅ ՆՅ ՍԾՅ ՍՅ ՍՅ՜

Սրբազան Հայրը բանախօսեց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիում. - Սոյն քաղաքի նոյեմբերի 18-ին Սրբազան



Հայրը այցելով Մաջիդիէ քաղաքում հանդիպում ունեցաւ քաղի բնակիչների հետ եւ ելոյթ ունեցաւ նրանց համար:

Բանախօսութեան նիւթն էր «Քրիստոսի եկեղեցին եւ եկեղեցու առաքելութիւնը աւետարանական լոյսի տակ»: Բանախօսութեան վերջում ժողովրդի կողմից եղան հարցեր, որոնց սիրով պատասխանեց Սրբազան Հայրը: Ներկայ էին նաեւ որոշ հոգեւորականներ: Տեղեկացեց, որ նման հանդիպումներ կը շարունակուին Ս. Սարգիս եւ Ս. Թարգմանչաց եկեղեցիներում:

Թղթակցութիւնը՝ Արսինէ Սինանեանի

Թեմիսի մրցոյթ Թեմիսի ՀՄԱԿ-ում. - Թեմիսի Մարգանշակոյթային Արարատ Կազմակերպութեան

Թեմիսի (open) տարեկան մրցութիւնը տեղի ունեցաւ սոյն քաղաքի նոյեմբերի 7-ին:



Մրցոյթին մասնակցում էին աւելի քան 40 մարզիկ-ուսիներ, որոնք մասնակցել էին հետեւեալ բաժանումներին:

- 1. Ազատ տղայոց բաժին
- 2. Ազատ օրիորդաց բաժին
- 3. Չուգախաղ (DOUBLE)
- 4. Խառը զուգախաղ (MIX DOUBLE)
- 5. 14 տարեկանից վար

Ազատ տղայոց բաժնում առաջին է հանդիսացել Արտոյտ Չոհրաբեանը: Երկրորդ տեղն է գրաւել Գառնի Խելումեանը:

Ազատ օրիորդաց բաժնում առաջին է հանդիսացել Թալին Աբրահամեանը: Երկրորդ տեղն է գրաւել Քարմեն Կարապետեանը: Չուգախաղերի

բաժնում առաջին են հանդիսացել Գառնի Խելումեանը եւ Կարէն Ասատրեանը:

Իսկ երկրորդ տեղն են գրաւել Արթի եւ Արտոյտ Չոհրաբեանները:

14 տարեկանից վար տարիքային բաժնում առաջին տեղն է գրաւել Արեգ Սարաբեանը, երկրորդ է հանդիսացել Արմինէ Չոհրաբեանը եւ երրորդ տեղն է գրաւել Նորիկ Մուսախանեանը:

Իսկ խառը զոյգերի բաժնում եզրափակիչ հասան Թային Աբրահամեան-Արթի Չոհրաբեան եւ Սարինէ Բեհզադ-Գառնի Խելումեան զոյգերը: Դրանց մրցոյթը տեղի կունենայ մօտ ապագայում:

Նիրատուրեան արարողութեան եւ եզրափակիչ խաղին ներկայ էին Տիկ. Արմինէ Մեթիսանեանը՝ մարզական բաժնից եւ պրն.՝ Վահիկ Չոհրաբեանը՝ որպէս Արարատ կազմակերպութեան նախկին պետեր:

Հարկ է նշել, որ գործադիր յանձնարարի մաս են կազմել հետեւեալ անձինք.

- 1. Արթի Չոհրաբեան (Պատասխանատու)
- 2. Ալէն Շահոյեան
- 3. Գառնի Խելումեան
- 4. Կարէն Ասատրեան
- 5. Արտոյտ Չոհրաբեան

Լրագրութիւնը՝ Արտոյտ Չոհրաբեանի

Համետ Թումանեանը լուսագոյնների շարքում. Ի.Ի.Հ «Շախմատ»-ի Ֆեդերացիայի Տեխնիկական յանձնախումբը հրապարակել է վերջին մէկ տարւայ լուսագոյն շախմատիստների ցանկը: Աղիւսակի 11-րդ շարքում է գտնուում իրանահայ տա-



ղանդատը շախմատիստ՝ Համետ Թումանեանը: Այս սեծ յաջողութիւնը պէտք է օրհանակ ծառայի՝ մեր նոր սերունդին՝ մարզական ասպարեզ ներգրուուելու համար:

«Լոյս»-ը նորանոր յաջողութիւններ է մաղթում Համետ Թումանեանին:

Շեքի համերգներ ԹՀԿՄԿ-ում. - Թեմիսի Հայ Կաթողիկէ Մշակութային Կենտրոնի նախաձեռնութեամբ, սոյն քաղաքի նոյեմբերի 10, 17 եւ 24-ին տեղի ունեցան «Ս. Ներսէս Շնորհալի»-ի անուան երաժշտական երիտասարդական երգչախմբի համերգները: Այն նկարագր էր Հայաստանում Քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեակին:

«Ս. Ներսէս Շնորհալի» երաժշտական խումբը, հիմնադրուած է 1987 թականին, Գեղ. Ներսէս Ծ. Վրդ. Թոսունեանի կողմից, որպէս կիսաարհեստավարժ խումբ, որը ունեցել է բեղուն գործունէութիւն, յատկապէս Հրաչուի Մակարեանի հետեւողական աշխատանքի եւ սրտցաւ ու բրձմախնդիր ղեկավարութեան շնորհիւ: Ունեցել է շուրջ 60 համերգներ Իրանի զանազան քաղաքների բազմաթիւ սրահներում: Տասնեակ համերգներ է ունեցել Թեմիսի «Վահղաք» սրահում, որտեղ բեմադրել է «Չարի Վերջը» եւ «Անուշ» օպերաները: Վերոյիշեալ խումբը այժմ հրախորած է Իտալիա, որտեղ 14 օրւայ ընթացքում պէտք է ներկայացնի նախապատրաստից իր ճոխ ծրագիրը:


Յաջողութիւն ենք մաղթում «Ս. Ներսէս Շնորհալի» երաժշտական խմբին:

Էձօ՞ն ԿՅ

Արտաքին կուսակցութիւնների հետ իրանական քաղաքական կազմակերպութիւնների յարաբերութիւնները ուսումնասիրեցին (Համբաստեցի օրաթերթ 15.11.00).- Երկրի պաշտօնական կուսակցութիւնների ներկայացուցիչները հանդիպելով ՆԳ նախարար՝ Մուսալի Լարիի հետ, ուսումնասիրել են վերոյիշեալ հարցը: Այդ հանդիպմանը մասնակցում էին 20 կուսակցութիւնների ու քաղաքական կազմակերպութիւնների ներկայացուցիչները: Հանդիպմանը ներկայ էին նաեւ Ներքին Նախարարութեան քաղաքական բաժնի փոխնախագահ՝ Թազազադէ եւ 10-րդ ժամօթագրութեան հիման վրայ կազմած կուսակցութիւնների հարց-

երը քննարկող յանձնախմբի անդամները: Մուսաի Լարին նշեց, որ մեր հասարակությունը այդ հարցի կապակցությամբ զգայուն է, իսկ նման յարաբերություններ ստեղծելու համար որեւէ արգելք չկայ:

**Իրանի պատմական յուշարձանների ցուցադրում Վիեննայում (Իրան օրաթերթ 22.11.00).** - Առաջին անգամը լինելով Վիեննայի արևստի



ու պատմության քանդարանում ցուցադրուեցին յուշարձաններ, որոնք պատկանում էին 7 հազար տարւայ իրանական քաղաքակրթության ու արևստին: Այդ ցուցահանդէսի բացմանը մասնակցում էին երկու երկրների մշակութային պատասխանատու այրեր: Այս աշխատանքները կապւած էին «Քաղաքակրթութիւնների Երկխօսութեան» հետ: Յուցադրուեցին քարից, ցեխից եւ երկաթից 188 օրինակներ:

ԾՅ Թ յօ Յ Կ

**Առաջին անգամը լինելով Իրանի (նշ հայկական) «Մամանդարեան»-ի անան երիտասարդական քատերախումբը ելոյթ ունեցաւ Հայաստանում .-** Սոյն քականի նոյն-



բերի 16-ին վերոյիշեալ քատերախումբը իր անդրանիկ ելոյթն ունեցաւ, Երեւանի «Պարոնեանի անան Երաժշտական Կոմեդիայի Թատրոն»-ում, որի բեմադրիչ ռեժիսորն էր Մոհամմադ Դաւուդին: Դաւուդիի

հետ, որպէս ռեժիսոր օգնական՝ համագործակցում էր Չահրա Ֆարհադին: Դերակատարներն էին Թահերէ Խաղեմին, ՀաՖեզ Ախիադը, Վալիօլլահ Բորջին եւ Ֆարգանէ Մոքոթին: Խմբի ընդհանուր ղեկավարն էր իրանահայ հանրածանօթ եւ տասնեակ ներկայացումների բեմադրիչ՝ Անդրանիկ Խեչումեանը: Այդ նոյն բեմադրութիւնը կրկնեց նաեւ Արովեան քաղաքում: Բեմադրութեանը ներկայ էին եղել Հայաստանում ԻԻՀ լիազօր դեսպան՝ Քոլէյնին, Հայաստանի մշակոյթի նախարար Շառոյեանը, Հայաստանում ԻԻՀ դեսպանատան կից Մշակութային Կենտրոնի պատասխանատու՝ Մոհսէն Աբոթալեբին, օտարերկրեայ դեսպաններ եւ այլ պետական ու պաշտօնական այրեր:

Ըստ մեզ հասած լուրերի՝ բեմադրութիւնը բարձր գնահատանքի է արժանացել, եւ երկու պարագային էլ սրահները լեւի- լեցուն են եղել: Եւ, որ



բոլորից կարեւորն է՝ նպաստել է երկու ժողովուրդների մշակութային յարաբերութիւնների ուղղակի ստեմանն ու զարգացմանը :

Հարկ է նշել, որ այս բոլոր յաջողութիւնների մէջ մեծ դեր է ունեցել Հայաստանի Թատերական Գործիչների Միութեան նախագահ՝ Ե. Աւզանչեանը:

Յաջող համարում մենք առանձին եւ մանրամասնօրէն կանդորառնանք այս յոյժ կարեւոր հարցին:

**Աշոտ Մանուչարեանը զիտի ինչպէս բացայայտել գործը, փոխարէնը նրան սկսել են հետապնդել (Հայկական ժամանակ օրաթերթ 26.10.00).** - Թերթին տւած մի հարցազրոյցում Աշոտ Մանուչարեանը արտայայտել է հետեւեալ մտքերը, Ինձ կրկին հրաւիրեցին դատախազութիւն, չնայած ես արդէն նրանց ասել եմ, թէ ինչ մեխանիզմներով է հնարաւոր բացայայտել հոկտեմբեր

27-ի գործը: Ես սպասում էի նախագահի վերադարձին, որը պէտք է, որ առաջնորդէր այդ գործնքացը՝ ճշմարտութիւնը



բացայայտելու առումով: Ցաւօք, նա վերադառնալուց յետոյ կատարել է ճիշտ հակառակ քայլերը: Նա իրեն հաւատարիմ մամուլին ուղղել է այն անձանց դէմ, ովքեր հանդէս են գալիս Մեղրիի վարկածի հետ կապւած բացայայտումներով: Մեղրիի վարկածի մասին ես խօսել եմ հանցագործութիւնից 3 օր յետոյ եւ խօսում եմ մինչեւ այսօր: Դատախազութիւնը փոխանակ ստուգելու այդ բոլոր փաստերը, նախագահի կողմից պարտադրւած քայլեր է անում եւ գործում է ոչ թէ որպէս հանցագործութիւնը բացայայտող մարմին, այլ մի մարմին, որը հետապնդում է այն անձանց, ովքեր փորձում են խօսել Մեղրիի վարկածի մասին:

Մի բան յստակ պարզ է, այստեղ գործում է Ռոբերտ Քոչարեանի հրահանգը: Այսինքն, սա ոչ թէ զինուորական դատախազութեան դիրքորոշումն է, այլ Ռոբերտ Քոչարեանի հրահանգը, որը ոչ թէ ՀՀ նախագահն է, այլ արեւմուտքի ներկայացուցիչը Հայաստանում: Այսինքն, նա միայն պաշտպանում եւ ներկայացնում է արեւմուտքի շահերը: Եթէ մինչեւ այսօր, մինչ նրա վերադարձը ես կարող էի կասկածներ ունենալ այդ առնչութեամբ, սպա այժմ համոզւած եմ:

**ՀՅԴ-ից Հրանտ Մարգարեանը մեկնաբանում է (Հայկական ժամանակ օրաթերթ 26.10.00).** - Երեկ մեր հարցումին ի պատասխան, թէ արդեօք վարչապետ Արամ Մարգարեանն իրեն ժամանակին զգուշացրել է տարածքների փոխանակման ծրագրի մասին, Հրանտ Մարգարեանը խորհուրդ տուց իր պաշտօնական տեսակէտը ճշտել ՀՅԴ Գերագոյն մարմնից: Այսօր ՀՅԴ ԳՄ-ից ճշտեցինք Հրանտ Մարգարեանի պաշտօնական տեսակէտը, իսկ ԳՄ-ի անդամ Գե-

դամ Մանուկեանն անելացրեց, որ դա նաև ՀՅԴ-ի պաշտօնական տեսակետն է: Հրանտ Մարգարեանը նշել է, որ քանի որ հարցը շատ վաղուց էր արծարծուած, հիմա նոյնիսկ կը դժուարանաւ յիշել, թէ խօսակցութեան նախաձեռնութիւնն ումն էր, քանզի մենք ի սկզբանէ ժխտողական կեցւածք ունէինք այս խնդրում: Բանակցութիւններում շատ խնդիրներ կարող են արծարծել, սակայն բանակցութիւններն այլ բան են, իսկ լուծումները այլ:

**Հայաստանի Ատոմակայանը վերընկնեց աշխատանքը (Երեւան, Նոյեան Տապան )** .-Աարտել են Հայկական ԱԷԿ-ի ամենամեծ ծրագրային նախագծուչական վերանորոգման աշխատանքները: Ինչպէս յայտնեցին ՀՀ էներգետիկայի նախարարութեան մամուլ կենտրոնից, գործող ռէակտորը բեռնատրել է վառելիքով: Սոյն քիւլանի նոյնքերի 29-ի ժամը 11:15 ռէակտորը գործարկել է եւ հասել այսպէս կոչւած մագագոյն վերահսկելի մակարդակի:

Վերանորոգման պատճառով ատոմակայանի աշխատանքը ընդհատուած էր սոյն քիւլանի յուլիսի 29-ից:

**ՀՀ վարչապետ Ա. Մարգարեանը եւ հոկտեմբերի 27-ը (Հայկական Ժամանակ օրաթերք 26.10.00)**.- Վարչապետը պատաս-



խանել է լրագրողների մի քանի հարցերին: Այս հարցերից մէկը վերաբերում էր Ա. Մանուչարեանի վերջին յայտարարութիւններին: Վերջինը յայտարարել է, թէ հոկտեմբերի 27-ի դէպքերի հիմքում ընկած է, այսպէս կոչւած, Գորի ծրագրին Վ. Մարգարեանի ու Կ.Գեմիրճեանի ընդ-

դիմանալը: Ա.Մարգարեանը կարծիք յայտնեց, թէ, դա մի վարկած է, որը քննչական խումբը պէտք է քննարկէր: Ես չգիտեմ, տեղեակ չեմ, քննարկել է՝ մերժել է, թէ... չնոսնանք, որ քննչական միութիւնից բաժանուած է մի մաս: Վարչապետը յոյս յայտնեց, թէ այդ անջատուած մասով նախաքննութիւնը կը շարունակի:

**ՅԷԶ<sup>2</sup> 1/4 1 2 ՄԱԷՍ**

**Աղբերջանցիները բողոքում են ընտրութիւններում կատարուած կեղծիքների համար (Համբարեցի օրաթերք 20.11.00)**.- Աղբերջանի ընդդիմադիր խմբերը պահանջել են կրկնել այդ երկրի խորհրդարանի ընտրութիւնները դեմոկրատիա եւ ազատութեան սկզբունքներով: Նըրանք իրենց ցայցերում պահանջել են չեղեալ համարել ընտրութիւնների արդիւնքները: Մի խումբ միջազգային դիտորդներ նաեւ այն տեսակետին են, որ խախտումներ տեղի են ունեցել եւ այդ ընտրութիւններում նըրագագոյն միջազգային ստանդարտները, չափանիշները նկատի չեն առնել:

**Ռուսները ծարաւ են իրանական գրականութեանը (Համբարեցի օրաթերք 14.11.00)**.- Յայտնի իրանագէտ պրոֆեսոր Դանիէլ Կոմիսարովը պահանջել է՝ անել շատ ջանքեր գործադրել Ռուսաստանում Իրանի ժամանակակից գրականութիւնը ծանօթացնելու համար: Նա 92 տարեկան է եւ իր կեանքից անելի քան 70 տարին յատկացրել է պարսկերէն լեզուի դասաւանդմանը՝ Ռուսաստանում:

**Քաղաքակրթութիւնների Երկխօսութիւնը մեծ իրադարձութիւն է աշխարհում (Իրան օրաթերք 22.11.00)**.- ՄԱԿ-ի առաջին քարտուղարի յատուկ ներկայացուցիչ «Ձիւնդո Մինկո Պիկո»-ն, որը «Քաղաքակրթութիւնների Երկխօսութեան» հարցով գտնուած էր Թեհրանում, առաջադրուած էր ընդունելութեան արժանացած «Քաղաքակրթութեան Երկխօսութեան»-ը մեծ յաջողութիւն համարեց ԻԻՀ համար: Նա ասաց, որ ՄԱԿ-ը իր բոլոր քաղաքական


ջանքերը գործադրելու է, որպէսզի այս մեծ ծրագիրը մինչեւ 2001 քիւլանը իրականացի:

**Չինաստանը կը դառնայ «էլեկտրոնիկայի իշխանութիւն» (Համբարեցի 23.11.00)**.- Չինաստանը մտադիր է իր կազմակերպութիւնների ու պետական տարբեր մարմինների միջեւ սահմանները վերացնելու եւ հարցերը արագ լուծելու համար ստեղծել «էլեկտրոնիկ պետութիւն»: Դա այնպիսի մի կարգավիճակ կը լինի, որում բոլոր աշխատանքներն ու կարգադրութիւնները կատարուելու են համակարգիչների միջոցով:

**ՀՀ վարչապետը Չինաստանում (ԻԲՆԱ 05.11.00)**.- ՀՀ կառավարութեան մի պատուիրակութիւն գլխավորութեան վարչապետ՝ Անդրանիկ Մարգարեանի Չինաստան մեկնեց:

Ըստ ԻԲՆԱ-ի հաղորդագրութեան՝ Չինաստանի վարչապետը մի ելոյթում յայտնել է, որ իրենք յարգում են Հայաստանի նման անկախացած երկրների որդեգրած ծրագիրը՝ հասնել լիարժէք եւ պատուար անկախութեան ու բարգաւաճման: Չինաստանի վարչապետը յայտնեց, որ իր պետութիւնը կօժանդակի Հայաստանին վերոյիշեալ նպատակների հասնելու համար:■

**Նորամուտների Քալուստը բարի**



**Ալենիա Պետրոսեան**  
մայրը՝ Անժել  
հայրը՝ Անդրէ

**Նարե Ալմասեան**  
մայրը՝ Կարինէ  
Հայրը՝ Էդուարդ

**Փիթեռ**  
**Յարութիւնեան**  
մայրը՝ Լիդա  
հայրը՝ Մարտիկ




# Հայրենիքը Օգնութեան Կարիք ունի

Եւ այս դժուար օրերին պէտք է սատարել նրան...

*Երեւանում հրատարակուող «Աւանգարդ» թերթը իր սոյն թւականի 23 նոյեմբերի համարում մի յօդուած է հրատարակել, որում մէջբերուած է Իրան - Հայաստան Առեւտրական Պալատի նախագահ՝ պրն. Լ. Ահարոնեանի անկեղծ խօսքերը: Ստորեւ ներկայացնում ենք այն նոյնութեամբ:*

**Խմբ.**

## ...Դու միշտ կանգուն, իմ Հայաստան



Պետական հանրախանութիւն կազմակերպուած Իրան-Հայաստան առեւտրի պալատի հերթական ցուցահանդէս-վաճառքը մեծ աշխուժութիւն է առաջացրել: Ցուցադրուող նմուշները բազմազան են ու տարաբնուոյթ: Ցուցահանդէս-վաճառքի բացման արարողութեանը մասնակցում էին Իրանի եւ Հայաստանի բարձաստիճան պետական այրեր: Ի տարբերու-

թիւն միւս երկրների նմանատիպ միջոցառումների, Իրան-Հայաստան առեւտրի պալատը շատ կարեւոր առաքելութիւն ունի՝ Հայաստանում ստեղծել ցուցադրուող նմուշների համատեղ արտադրութիւն: Այսինքն, Հայաստանը նրանց համար լոկ շուկայ չէ, նրանք ցանկանում են հնարաւորինս խթանել արտադրութիւնը Հայաստանում: Այս մասին իրենց խօսքում ասացին եւ հայ, եւ Իրանցի պաշտօնեաները: Ինչպէս իր խօսքում կարեւորեց ՀՀ արտադրական ենթակառուցածքները համակարգող նախարար Գ. Չաղոյեանը, կայ նախնական պայմանադրութիւն՝ քննարկելու եւ գտնելու շաքիտնալ ճանապարհներ՝ ինչպէս համատեղ արտադրութիւն ստեղծելու, նոյնպէս որոշ ապրանքներ արտահանելու միւս երկրներ (Ռուսաստան, Եւրոպա, Արաբական երկրներ): Այս հարցերի շուրջ որոշումներ կայացնելու եւ պայմանագրեր կնքելու համար Հայաստան է եկել Իրանի արդիւնաբերութեան փոխնախարար պարոն Մեփահիվանդը, որը շատ հայասեր է:

Ցուցահանդէս-վաճառքը բարձր մակարդակով կազմակերպելու համար իրենց մեծ ներդրումն ունեն Իրան-Հայաստան առեւտրի պալատի խորհրդի անդամներ՝ Սիիրան Փիրումեանը, Սողոմոն Բարսեղեանը, Վարուժ Մուրեանը եւ, իհարկէ, պալատի նախագահ Լեւոն Ահարոնեանը: Ցուցահանդէս-վաճառքի բացման օրը մի խորհուրդ էլ ունէր: Այդ օրը Լեւոն Ահարոնեանը դարձաւ 70 տարեկան «Աւանգարդ» թերթի խմբագրութիւնը շնորհաւորում է նրան, ցանկանալով նորանոր յաջողութիւններ եւ կանաչ ու ծաղկազարդ ճանապարհ...:

Սպումաստեցու արմատներով, Իրանում ծնած Լեւոն Ահարոնեանը մասնագիտութեամբ քիմիկոս է: Ժամանակին եղել է պետական պաշտօնեայ, բայց հոգով ազատ եւ

ըմբոստ Լեւոնը թողեց այդ պաշտօնը, չյարմարելով պաշտօնեայի ոչ ազատ գործունէութեանը եւ ձեռնամուխ եղաւ Իրան- Հայաստան առեւտրի պալատի ստեղծմանը:

- Իրան-Հայաստան առեւտրի պալատը կազմաւորել է 40 իրանահայ գործարարների միջոցով: Երբ Հայաստանը հռչակեց իր անկախութիւնը, մենք ցանկացանք բարեկամական եւ առեւտրային յարաբերութիւններ ըստեղծել երկու երկրների միջեւ: Այդ յարաբերութիւնները ստեղծեցին Հայաստանի դժարին, շրջափակման օրերին: Ես առաջինն էի, որ գալով Հայաստան, խնդրեցի այն ժամանակայ վարչապետ Վազգէն Մանուկեանին ծանօթացնել ինձ Մեղրի-Իրան ճանապարհին: Պարսկերէն լեզուով մայր զեկոյց պատրաստեցի եւ ներկայացրեցի Իրանի կառավարութեանը: Դրանից յետոյ մայիս ամսին մեծ բիզնես-Ֆորում եղաւ Հայաստանում, եւ ես ընտրեցի Իրանի խորհրդի անդամ ու փոխնախագահ: Յետագայում մենք որոշեցինք առանձնաձայ Իրանի կառավարութիւնից եւ ստեղծեցինք Իրան-Հայաստան առեւտրի պալատը:

Տարիների փորձ եւ յաջող գործարար կեանք ունեցող Լեւոն Ահարոնեանը մի փոքր յուզած էր:

-Ճիշտ է, ես գործարար եմ, բայց Հայաստանի հետ համագործակցութիւնն աւելի շուտ արեան ու հոգու կանչ է: Ծնողներս կրթած մարդիկ էին եւ հայրենասիրութիւնը մանկուց են ներարկել մեր հոգում: Մենք երեք եղբայր ենք, բոլորս, ինչպէս նաեւ մեր զաւակները, խօսում ենք հայերէն: Այսպիսի մի խօսք կայ, եթէ մարդը չի սիրում իր հայրենիքը, ուրիշ ոչ մի երկիր սիրել չի կարող:

Իրօք, հայրենիքի սերն է առաջնորդում Լեւոն Ահարոնեանին: Նա միայն իր ձեռնարկմամբ չէ, որ մտաւ հոգ է: Արտագաղթը, երիտասարդութեան դաստիարակութեան տարերայնութիւնը նոյնպէս հոգու ցաւ են նրա համար:

-Հայաստանը դժուար օրեր է ապրում եւ օգնութեան կարիք ունի: Այսօրայ երիտասարդները պէտք է հասկանան, որ իրենք պիտի կառուցեն իրենց հայրենիքը:

Իրանում 100 հազար հայ կայ: Մենք բոլորս աշխատող մարդիկ ենք: Այնտեղ բոլորը գիտեն, որ հայը ամենաազնիւ մարդն է: Ճիշտ է, դժուար է հայ լինելը: Այդ է ապացուցում մեր պատմութիւնը: Դժուար է, բայց մենք կարող ենք հպարտանալ, քանզի այդքան փոքորկոտ պատմութիւն ունենալով հանդերձ, մենք չանհետացանք, չկործանեցինք: Նայենք միւս հին ժողովուրդների պատմութեանը:

Հայերի ու Հայաստանի մասին խօսելիս Լեւոն Ահարոնեանի աչքերը փայլում էին, բայց մի բաբուն անկիւնում կարօտին խառնուած ցաւ կար:

-Այսօր Հայաստանում չկայ մի կուսակցութիւն, մի թերթ, որը նպաստի միաբանութեանը: Պէտք է ազգին կապել իր երկիրն: Հայրենիքը լքողներին պէտք է բացատրել, որ այստեղ Հայաստանում է, որ իրենց ոտքի տակ հող կայ: Օտար երկրում իրենց ոտքի տակինը հող չէ, աւազ է:

**Շար. էջ 7-ում**

## Հարցազրույց պրոֆ. Սերգեյ Բալասանեանի հետ

**Առաջին հերթին խորին շնորհակալություն Ձեր քան-կազին ժամը տրամադրելու համար, կը խնդրենք ներկա-յանալ եւ ներկայացնել Ձեր մասնագիտությունը եւ յետոյ՝ ի՞նչ առաքելութեանը էք զոնուս Իրանում:**



**Պ.-** Ես Հայաստանի սեյսմիկ ծառայութեան ազգային պետական կոմիտէի պետն եմ: Սեր ծառայութիւնը կառավարական ծառայութիւն է եւ ենթարկուած է անմիջապէս վարչապետին եւ ծառայութեան հիմնական խնդիրն է սեյսմիկ ռիսկի նւազեցումը Հայաստանում: Մենք ստեղծել ենք 1991-թականին: Այդ ընթացքում ստեղծել է խոշոր դիտարկման ցանց, որը, կարելի է ասել, եզակի է աշխարհում, որը բաղկացած է աւելի քան 150 ժամանակակից դիտակայաններից, որը հնարարութիւն է տալիս մեզ անընդհատ դիտարկումների միջոցով (մոնիտորինգ) գնահատել ընթացիկ սեյսմիկ վտանգը Հայաստանում եւ յարակից երկրներում: Սեր ծառայութիւնը զբաղուած է, բացի դրանից, շէնքերի եւ կառոյցների սեյսմակայունութեան բարձրացման հարցով: 3-րդ ուղղութիւնը, որ զբաղուած է մեր կենտրոնը, դա բնակչութեան հետ տարող աշխատանքն է: Յաջորդ ուղղութիւնը՝ արագ արձագանքման ուժերն են, որոնք բաղկացած են փրկարարական ջոկատներից, սեւմոլոգներից, ինժինեքներից, որը շատ կարեւոր օղակ է եւ ծառայութեան մի մասն է:

1999թ. Հայաստանի կառավարութիւնում ընդունեց 30 տարւայ՝ Հայաստանում սեյսմիկ ռիսկի նւազեցման ծրագրեր: Այն արժանացաւ ՄԱԿ-ի «Մասասակա» բարձրագոյն մրցանակին, որը տրուած էր 5 երկրներ ներկայաց-

նող տարբեր մայրցամաքների: Մենք ճանաչեցինք աշխարհում երկրորդը՝ Չինաստանից յետոյ:

Թեիւրան ենք ժամանել մեծ պատվիրակութիւնով՝ թուլ 25 հոգի, որոնք բացի սեյսմիկ պաշտպանութեան ազգային ծառայութիւնից, որոնք կազմում են թուլ 90 հոգի, կան նաեւ տարբեր գիտ. կազմակերպութիւնների աշխատակիցներ: Նոյեմբերի 10-12-ը տեղի ունեցաւ մեծ համաժողով, որը կապուած էր ասիական սեյսմոլոգիական յանձնաժողովի 3-րդ անսամբլիայի հետ: Այդ ժողովը տեղի է ունենում 2 տարին մէկ: Առաջին գագաթնաժողովը տեղի է ունեցել Չինաստանում: Եկրորդը՝ Հնդկաստանում եւ երրորդը՝ Իրանում:

Այս անգամ ես ընտրուեցի նախագահ: Այդ յանձնաժողովը միաւորում է 21 անդամ ասիական երկիր, որոնց թում ճապոնիան է, Չինաստանը, Հնդկաստանը, Իրանը եւ այլ երկրներ: Սա Հայաստանի համար մեծ հնարարութիւն է զարգացնելու այն գաղափարները, որոնք ստեղծել են Հայաստանում: Դա սեյսմիկ պաշտպանութեան գաղափարն է:

**Հ.-** Սեյսմոլոգիական պաշտպանութեան այդ կառոյցը կան քաղաքականութիւնը ինչպէ՞ս էք տեսնում Իրանում: Այսինքն՝ ինչքանով է՞ք ծանօթ եւ ինչպէս էք գնահատում այն:

**Պ.-** Իրանում, ինչպէս եւ այլ բազմաթիւ երկրներում, կան կառուցողական բազմաթիւ ինստիտուտներ, որոնք զբաղուած են այս հիմնահարցերի տարբեր խնդիրներով, փորձը ցոյց է տալիս, որ դա այնքան արդիւնաւէտ չէ՝ համեմատած այն երկրներին, որտեղ կայ խոշոր պետ. կառոյց, որը կարող է համախմբել բոլորին իր շուրջը այնուհետեւ ընդունում է պետ. ծրագրեր, պետ. որոշումներ, ապահովում է մարդկանց անվտանգութիւնը: Եթէ պետութիւնը չունի մի ուժեղ պետ. կառոյց եւ չունի համապատասխան օրէնքներ, եթէ չունի ծրագրեր մարդկանց անվտանգութեան վերաբերեալ, ապա՝ մարդկանց անվտանգութիւնը հնարարութիւն չունի ապահովել: Ինձ թում է, որ իմ նախագահութիւնը այս յանձնաժողովում պէտք է օգնի այս նոր գաղափարի տարածմանը, այսինքն՝ երկրաշարժերից պաշտպանելու անվտանգութեան համակարգի ստեղծումը մենք համարում ենք պետ. անվտանգութեան մի մաս:

Իրանում մենք ուղղակի պէտք է առաջարկենք, ցոյց տանք այս կառոյցի առաւելութիւնը, եթէ դա լինի ընդունելի՝ կը լինի շատ լաւ, չնայած դա քաղաքական հարց է, որը պահանջում է ժամանակ:

**Հ.-** Ընդհանարպէս այս երկրների փորձառութիւնները ինչպէ՞ս են փոխանցում մէկը միւսին, յատկապէս Հայաստանի եւ Իրանի միջեւ:

**Պ.-** Հայաստանի եւ Իրանի միջեւ մենք ունենք պայմանագրեր, նոյնիսկ համաձայնագիր փոխնախագահների մակարդակով: Դա թէ 1993 եւ թէ 1994 թականներին ստորագրուած պայմանագրեր են պետ. մակարդակով, որով սեյսմիկի պաշտպանութեան ոլորտին մեծ ուշադրութիւն է դարձել նշանակուած էին պատասխանատուներ Իրանի եւ Հայաստանի կողմից: Մենք ունենք



## Հասարակական

երկկողմանի պայմանագրեր մեր տարբեր կառույցների միջև եւ տարբեր ինստիտուտների միջև: Իհարկէ, բոլոր այդ համաձայնագրերը կան, բայց չեն կարող ասել, որ կայ լուրջ աշխատանք: Եթէ մենք ուզում ենք ճիշտ վտանգը գնահատել, ապա հարկաւոր է ունենանք ընդհանուր դիտարկումների ցանց, տեւայների արագ փոխանակում, որորշումների արագ ընդունում: Համենայնդէպս ես իմ կողմից ձգտում եմ, որ այդպիսի գործնական կապ ստեղծի Իրանի եւ Հայաստանի միջև:

**Վ.- Գործնականում եթէ Թեհրանում կամ Երեւանում, Աստուծ միարասցէ այդպիսի մի դէպք պատահի՝ հնարաւորութիւն կ'այ ժողովրդին պաշտպանու կամ փրկարարական աշխատանքներ տանելու, քանի որ Թեհրանում կառույցների մեծ մասը հնաշէն են եւ դիմացկունութիւն չունեն երկրաշարժի դիմաց:**

**Պ.-** Ես կարող եմ ասել, որ մեր ամբողջ քաղաքականութիւնը սէյմիկ պաշտպանութեան ոլորտում ուղղւած է նրան, որ մենք ոչ թէ սպասենք երկրաշարժին, որ երկրաշարժ լինի եւ յետոյ ինչ որ բաներ ձեռնարկենք, քանի որ համաշխարհային փորձը ցոյց է տալիս, որ ամէն ինչ ընդհակառակը, ժողովրդի համար պէտք է արի երկրաշարժից առաջ, քանի որ երկրաշարժից յետոյ ուշ է արդէն որեւէ էֆեկտի օգնութիւն ցուցաբերելու համար: Իհարկէ, աշխատանքներ կան՝ փրկարար աշխատանքներ, բուժօգնութիւն եւ այլ աշխատանքներ, սակայն գոհածներին փրկել հնարաւոր չէ: Այդ պատճառով պետութիւնը պէտք է անի մարդկանց անվտագութեան համար ամէն ինչ մինչեւ երկրաշարժը, քանի որ ցանկացած լաւագոյն կազմակերպւած փրկարարական աշխատանք հնարաւորութիւն է տալիս փրկել չնչին տոկոսը, իսկ հիմնական մասը գոհում է անմիջապէս: Հայաստանը աւելի թոյլ երկիր է տնտեսապէս, բայց կառավարութիւնը աւելի լրջօրէն է զբաղւում, այսինքն ամէն օրայ աշխատանքներից է այդ խնդիրը:

**Վ.- Շատ կուզեիք իմանալ հայ գիտնականների մասին: Յատկապէս ներկայ տնտեսական դժուար պայմաններում մեր գիտնականներն ի՞նչ են անում, ի՞նչ միջազգային աշխատանքներ են կատարում եւ ի՞նչ ճանաչումների են հասել:**

**Պ.-** Դա մեծ խնդիր է, որովհետեւ մեր գիտնականները միշտ կապւած են եղել Սովետական Միութեան գիտութեան հետ, իսկ Սովետական Միութեան գիտութիւնը կախւած է եղել ռազմաարտադրական խնդիրների լուծման հետ, հիմա երբ որ ամէն ինչը փլուզեց, մեր գիտնականները յանկարծակիի են եկել, իրենց համար պարզ չէ գիտական ո՞ր ասպարէզը պէտք է զարգացնենք, որ արժէք ունենայ միջազգային ասպարէզում:

Սա ամենամեծ խնդիրն է մեր գիտնականների համար ներկայ պայմաններում: Հիմա մեր գիտնականները ըզբաղւած են հայթաթումով այն ուղղութիւնների, որոնք կը բերեն Ֆինանսական արժէք:

Միջուկային Ֆիզիկայի ասպարէզում բաւականին մեծ աշխուժութիւն կան մեր գիտնականների եւ գերմանիայի գիտնականների միջև:

Կայ մեծ աշխուժութիւն ծրագրաւորման ուղղութեամբ՝ մեր գիտնականների եւ Միացեալ Նահանգների միջև: Մնացած ոլորտներից շատ տեղեակ չեն, միայն գիտեմ, որ հումանիտար ոլորտների վիճակը աւելի ծանր է, քանի որ անմիջապէս կախւած են կառավարութիւնից ակնկա-

լիք պէտք է ունենայ պետութիւնից, որն այսօր անգոր է:



Իսկ ինչ մնում է ճշգրիտ գիտութիւններին եւ կիրառական գիտութիւններին՝ նրանք պէտք է գտնեն իրենց շուկան իրենց ապրանքները վաճառելու համար:

Յոյսով եմ, որ ձեր հարցերին տուցի գոնէ բաւարար պատասխան:

Եւ խորին շնորհակալութիւն Ձեզ՝ այստեղ լինելու առմամբ, եւ մեզ ժամ տրամադրելու համար: Մեր խնդրանքը նա է, որ աւելի շատ գրէք, աւելի շատ այս հարցերի մասին՝ ասուլիսներ, տեսակետներ, ինչքան շատ գրէք, ինչքան որ ժողովրդի տեսակետներ արձանագրէք, ինչքան որ ժողովրդին ձայն տաք, այնքան մեր գործը կհեշտացնէք՝ առողջական իմաստով: ■

*Շարքագրոյցը վարեց*

**Հայրենիք... Զար. էջ 5ից**

*դոկտոր Ռ. Սարգսեանը*

**Այսօր Հայաստանում՝ Իրանում ծնւած հայեր կան, ովքեր եկել են Հայաստան մշտական բնակութիւն հաստատելու: Իհարկէ, նրանց վիճակը Իրանում աւելի բարւոք էր, բայց...**

Ես գիտեմ շատ դժուար է այսօր, բայց այս դժուարութիւններն անցողիկ են: Ես կարծում եմ, որ մի-երկու տարի յետոյ ամէն ինչ կը կարգաւորի: Հայը աշխատասէր է: Հայաստանի աշխարհագրական դիրքը այնպիսին է, որ բոլորը հետաքրքրւում են Հայաստանով: Այսօր միայն Թուրքիան է, որին յարմար չէ հզօր Հայաստանը: Բայց բարեբախտաբար աշխարհի ընդհանուր գաղափարները համընկնում են: Այսօր շատ-շատ երկրներ ցանկութիւն ունեն Հայաստանում ներդրումներ կատարել: Մենք պէտք է սիրենք մեր հայրենիքը, որպէսզի կարողանանք վտահոսեան դաշտ ապահովել օտար ներդրողների համար: Այսօր բոլորը հայեալում եւ դժգոհում են, բայց չէ՞ որ շատ դժուար է որեւէ բան կառուցել, առտել եւս հայրենիք: Եկէք օգնենք միմեանց կառուցելու եւ հզօրացնելու մեր Հայաստանը: Ես վստահ եմ մեր ժողովրդի կենսունակութեանը: Այս երկիրը մեր բոլորի մայրն է, որին պէտք է սիրել եւ գտրգտրել: ■

### Ուղղում

Մեր թերթի 16-րդ համարի էջ 12-ում վրիպումներ են տեղի ունեցել, որոնց ստորեւ ճշտում ենք.

- 1- Առաջին սիւնակի 39-րդ տողում, *Ֆրանսիայի փոխարէն* պէտք է լինի *Ճապոնիայի*.
- 2- Յօդուածի վերջում *հատուցել* բառի փոխարէն պէտք է լինի *յարուցել* :

# Ցեղասպանություն

ՏԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻՆ

## Հարց է տալիս թուրք մտաւորականը իր ազգակիցներին

Ինչպէս «Ազգի» երեկւայ համարում տեղեկացրել էինք, թուրք յայտնի մտաւորական, սոցիոլոգ եւ հասարակական գործիչ Թաներ Աբչանը թուրքական «Ենի Բինեդըլ» («Նոր հազարամեակ») օրաթերթի հոկտեմբերի 1-ի համարում վերոյիշեալ խորագրի ներքոյ տպագրել էր մի յօդուած, որի ամբողջական թարգմանութիւնն անդադրեցնելու ներկայացնում ենք ստորեւ:



Ես ամաչում եմ մարդկային ցեղին իմ պատկանելութիւնից: Վերջին մի քանի օրերին հետեւելով Մ. Նահանգների Կոնգրեսի կողմից Հայկական ցեղասպանութեան քննարկումների առթիւ թուրքական արձագանքներին, առաջին զգացումը, որ ապրում եմ, ամօթն է:

Փորձում եմ հասկանալ հիւ-տերիան, կատաղի յարձակումները, սպառնալիքները, լկտիութիւնները եւ այլն: Գուցէ այս բոլորը հնարատր լի-նի բացատրել: Բայց այն, ինչ ամենատարօրինակն է թը-ւում ինձ, թեմայի այսպէս կոչւած «առցիտնալ» քննարկումներն են: Այստեղ կարծես մի խաղ է խաղացում, որտեղ իրաքանչիւր կողմ փորձում է խորապէս վերլուծել յետագայ մարտավարութիւններն ու քայլերը: «Ցեղասպանութեան» զնդակը գտնուում է մեջտեղում, եւ մենք խաղ ենք «խաղում»: Իսկ «զնդակը», որին հարւածում ենք, 800 հազար մահացած մարդիկ են (որոնք սպանել են այդ օրերին):

Ես ամաչում եմ: Որովհետեւ նրանք, ովքեր քննարկում են հարցը, կամ գաղափար չունեն ինչի մասին են խօսում, կամ էլ գորկ են մարդկային տարրական զգացումներից: Ուրիշ բացատրութիւն չեմ գտնում: Ցանկանում եմ յիշեցնել: Նոյնիսկ եթէ քանակի եւ պատճառների մասին վիճենք, միեւնոյն է, փաստ է, որ ըստ օսմանեան պաշտօնական վիճակագրութեան, 800 հազար մարդ է սպանել: Այո, պարոնայք, մենք խօսում ենք 800 հազար մարդկանց մասին, որոնք մահացել են, որոնք սպանել են: Իսկ եթէ չէք ընդունում այդ թիւը, առնուազն եկէք ընդունենք այն թիւը, որը մենք վերջին տարիներին նազեցնելով հասցրել ենք 300 հազարի:

Հասկանում էք՝ ինչ էք անում կամ ինչի մասին էք խօսում: Այլի Մամիի անուան մարզադաշտը 35-40 հազար հանդիսատես է տեղաւորում: Պատկերացրէք, որ տասն անգամ այդ մարզադաշտը լցնենք եւ դատարկենք: Հասկանում էք, այդքան մարդ մահացել է, սպանել է: Մենք խօսում ենք այդ մարդկանց ճակատագրի մասին: Պարոնայք, մի հոգու մահուան մասին անգամ խօսելիս մենք տխրում ենք: Եկէք այժմ քննարկենք (հարցը) ձեր մտքում եղած թաքսանակի տեսանկիւնից: Մենք խօսում ենք 300

հազար մարդկանց մահուան մասին, եւ նոյնիսկ եթէ ընդունենք, որ մահուան դէպքերը տեղի են ունեցել ըմբոստութեան կամ առողջական պայմանների բերումով, ապա եկէք վերստին կարդանք, թէ ինչ էք գրում դուք, վերստին դիտարկենք, թէ ինչ էք քննարկում եւ ասում այդ 300 հազար մարդկանց մահուան առնչութեամբ: Մի՞թէ այդ բոլորը սրտխառնուք չի առաջացնում: Մի՞թէ չէք ցանկանում սրտներդ թափել: Մի՞թէ չէք ամաչում մարդկային ցեղին ձեր պատկանելութիւնից:

Հայկական հարցի քննարկումներն անցկացնելու մեր ձեռք երեսն է համում մեր երկրում գոյութիւն ունեցող գրչաւոր խնդիրը, մենք շատ հեռու ենք կոտորած քննարկելու կարողութիւնից: Մենք նոյնիսկ չունենք կոտորած դատապարտելու բարոյական հիմքերը: Չունենք նաեւ նման ողբերգական իրադարձութիւնների հանդէպ անհրաժեշտ վիշտ զգալու բարոյականութիւնը, որը պարտադիր է քննարկումների ընթացքում: Տեսէք, թէ ինչեր են գրել: Նոյնիսկ նրանց հաշարկներով՝ 300 հազար մարդկանց մահը ողբերգութիւն է, բայց մի տող անգամ չի նշւած, որ եղելութիւնը արժանի է տխուր զգացումների: Տխրութեան նշոյլ անգամ չկայ: Իրականում նրանք զանգակներով պարելու եզրին են: Ո՞րն է բարոյական կշիռն այն ամենի, ինչ գրած է: Դուք որեւէ բան տեսնո՞ւմ էք «մի քանի դուաճաններ, որոնք փորձում էին քայքայել մեր կառավարութիւնը, մահացան տեղահանութեան ընթացքում: Դրանում ի՞նչ դատապարտելի բան կայ» նախադասութիւններից բացի: Կամ «ոչինչ էլ չի պատահել, բայց նոյնիսկ եթէ պատահել է, ապա դրանում հայերն են մեղաւոր» տողից բացի: Եւ կամ «մենք դարձեալ նոյն բանը կանենք, եթէ հանգամանքները կրկնեն» արտայայտութիւնից բացի:

Ինչ դիրք էլ բռնենք, եթէ ցանկանում ենք մի քայլ առաջ գնալ, եկէք չմոռանանք, որ մենք խօսում ենք հարիւր հազարատր մարդկանց մահուան մասին: Եթէ կարողանանք այս մտածողութեանը համապատասխան մտածելակերպ ձեւաւորել մեզ մօտ եւ որդեգրել այն բարոյականութիւնը, որը դատապարտում է կոտորածները, պիտի տեսնենք, որ այդ նոյն մարդիկ, որոնք վերագրում ենք յարձակումները մեզ վրայ, սկսելու են խօսել մեզ հետ: Մեր ներկայ գործելակերպով պարզապէս ցոյց ենք տալիս, որ արժանի ենք մեր դէմ քննադատութիւններին: Կոտորածներ գործելը կամ կոտորածի պատճառ դարձած իրավիճակների ստեղծումն ամաչելու բաներ չեն: Եթէ անհրաժեշտ է, կատարում են դրանք: Այս մտածողութեանը ենք մենք ցանկանում տեղ գրաւել արդի աշխարհում: Այո՞:

Պարոնայք, այն, ինչ անում ենք, մի խօսքով անբարոյական է:

Ցանկանում եմ ընդգծել 3 կետ «ցեղասպանութեան հարցի» շուրջ:

Առաջին: Նկատել եմ, որ թերթերի շատ սիւնակագիրներ յանկարծ այս հարցի մասնագետներ են դարձել: Բայց այն, ինչն ինձ իրօք տխրեցնում է, այն է, թէ ինչպէ՞ս են նրանք անամօթաբար թող փշուր՝ առանց նոյնիսկ հարցնելու, «Իսկ ի՞նչ ճշմարտութիւն է թաքնուած այս հարցի ետեւում, գուցէ հարցնեմ եւ իմանամ»: Հաւատացէք ինձ, այն ամէնը, ինչ նրանք ներկայացնում են որպէս «Պատմական փաստ» եւ «Ժողովրդի զիտելիքների արդիւնք», ոչ այլ ինչ է, քան տգիտութեան անիմաստ պտուղ: Եթէ



## Հասարակական

անհրաժեշտ է, բերեն մի օրինակ. նրանք պնդում են, թե «հայերը միայն տեղահանել են Արեւելեան Անատոլիայից» (Գիւնեթի Չիւօղլուն նոյնիսկ անելի հեռու է գնում՝ անելացնելով Կենտրոնական Անատոլիան): Այս բառերն ամբողջովին անհեթեթութիւն են: Այն, ինչ հինք չունի, պարզապէս յօրինում է: Քեօթահիա, ԱՖիոն, Ուշաք, Բուրսա, Էդիրնէ, Թեքիրտաղ, Բայիքեսիր, Բուլու և այլն: Այս թեմայի վերաբերեալ նոյնիսկ երկու-երեք գիրք թող-թատելով կարելի է իմանալ, որ հայերը տեղահանել են Անատոլիայի բոլոր քաղաքներին: Եւ եթէ հետաքրքրութիւնից դուրս մէկն ու մէկը թերթի Թուրքական հանրապետութեան կառավարութեան փաստաթղթերը, անպայման բարարար նիւթ կը գտնի այնտեղ: Դրանցում յստակ ասած է, որ հայերը տեղահանել են Անատոլիայի բոլոր վայրերին:

Երկրորդ: Թարանակի վերաբերեալ մի բան կայ, որ պէտք է իմացի: Ազնօրէն ասած՝ վիճելն այս հարցի շուրջ ճիշտ չէ: Ի՞նչ ենք ցանկանում սպացուցել: Ի՞նչ տարբերութիւն՝ 1,5 միլիոն են եղել զոհերը, թէ՞ 300 հազար: Եթէ 1,5 միլիոնը չափազանցութիւն է, կարելի՞ է արդարացած համարել 300 հազարի սպանութիւնը: Քանի որ այդ ժամանակայ թերն այնքան էլ վատահելի չեն, դժար է պաշտօնական որեւէ բան ասել, բայց զոհն կարելի է այդ մասին խօսելիս յղում կատարել օսմանեան կառավարութեան կամ Թուրքական հանրապետութեան զինուորականութեան հրատարակած պաշտօնական թերին: Այդ ձեւով ասածն անելի լրջօրէն կընդունի:

1918-ի դեկտեմբերին ներքին գործերի նախարար Մուսթաֆա Արիֆը յանձնախումբ է կազմում՝ որոշելու համար պատերազմի ժամանակ սպանւած հայերի քանակը: 1919-ի մարտի 14-ին այդ յանձնախումբը յայտարարում է, որ սպանւած հայերի թիւը 800 հազար է: Յայտարարութիւնն անում է (այդ ժամանակայ) ներքին գործերի նախարար Ջեմալ քէլը: Յետագայում այս թիւը տարբեր առիթներով հրատարակու մշում են նաեւ շատերը, որոնց թում Մուսթաֆա Քեմալը (Աթաթուրքը) : 1928-ին թուրքական զինուորականութիւնը Առաջին աշխարհամարտի զոհերի վերաբերեալ գիրք է հրատարակում՝ քարգմանւած Ֆրանսերէնից: Լէյտենանտ-գնդապետ Նիհատի հրատարակած այս գրքում Թուրքիային վերաբերող թերը փոխւած են: Համաձայն թուրքական զինուորականութեան տուեալների, Առաջին աշխարհամարտի ընթացքում «800 հազար հայեր և 200 հազար յոյներ մահացան տեղահանման հետեւանքով կամ աշխատանքային բրիգադներում»: Այս թերը ներկայացնող Ե. Հ. Բայուրն ասում է. «Ըստ մեր ունեցած պաշտօնական աղբիւրների, այս թերը ճիշտ են» (Ե. Հ. Բայուր: Թուրքական յեղափոխութեան պատմութիւնը. հատոր 3, մաս IV, էջ 787): Այլ խօսքով, մեր պաշտօնական աղբիւրների համաձայն, սպանւածների թիւը 800 հազար է: Եւ դա վերաբերում է միայն 1914-1918 թուականներին:

Երրորդ այն է, թէ հայերին սպանելու հրաման տրե՞լ է, թէ՞ ոչ: Այստեղ էլ փաստաթղթերի տեսքով սպացուցներ կան, հակառակ իթթիհաղականների փորձերի՝ պատերազմից անմիջապէս յետոյ ոչնչացնելու արխիւները կամ գողանալու փաստաթղթերը: 1919-22թթ. Ստամբուլում կայացած զինուորական տրիբունալի նիստերի ժամանակ մի քանի հեռագրեր և փաստաթղթեր են կարդացել և ականատեսների վկայութիւններ լսել: Այդ փաստաթղթ-

երից շատերը յետագայում հրատարակել են օսմանեան կառավարութեան պաշտօնական տեղեկագրերում (Թարիմ-ի-վեկայի) և մի շարք այլ թերթում: Գերմանական, աստրիական, ամերիկեան և բրիտանական արխիւներում եղած փաստաթղթերը համընկնում են օսմանեան արխիւներում եղածներին:

Այստեղ ուզում են առանձնացնել մի փաստաթուղթ, որը երեւի պատահականօրէն է մուտք գործել արխիւների վարչութեան հրատարակած մի գրքում: Վերնագրւած է «Հայերը օսմանեան կառավարութեան փաստաթղթերում (1915-20 թթ.)»: Յունիսի 29-ին (յուլիսի 12-ին) ներքին գործերի նախարարը կողաւորւած հեռագիր է ուղարկում Դիարբեքիր, որում ասում է. «Դիարբեքիրից Մարդին տեղահանւած հայ և այլ քրիստոնեայ փոքրամասնութիւններից 700-ը զիջելով տարւել է քաղաքի արարձանները և ոչխարների մնան մորթել»: Նշում է, որ 2000 հոգի այս ձեւով սպանւել է: Նաեւ նշում է. «Եթէ անմիջական և որոշակի միջոցառումներ ձեռք չառնեն, վախ կայ, որ ամբողջ քրիստոնեայ բնակչութիւնը կտոտրի»: Հեռագիրն արարտում է հետեւեալ նախադասութեամբ. «Եթէ հայերի դէմ գործադրւած քաղաքականութիւնը կիրառուի նաեւ միւս քրիստոնեայ փոքրամասնութիւնների հանդէպ, վատ հետեւանք է թողնելու ամբողջ հասարակութեան վրայ: Որեւէ բան, որ սպառնում է յատկապէս քրիստոնեաների կեանքին, պէտք է դադարեցի»: Փաստաթուղթը չափազանց անկեղծ է և յիշեցնում է, որ հայերի հանդէպ կիրառու քաղաքականութիւնը և նրանց կտոտրելու ձեւերը պէտք է անհապաղ դադարեցնեն և չգործադրեն այլ քրիստոնեաների հանդէպ: Թուրքական հանրապետութեան պաշտօնական օղակներից մէկը հրատարակելով է մնան մի փաստաթուղթ, որի վերլուծութիւնը թողնում են Շիւքրու Էլեկդաղին և Գիւնթուգ Աքթանին \* : ■

Ազգ օրաթերթ  
11.10.00

Գանձի...

Ճար. էջ 1-ից

«Քասախի բազիլիկայի ճարտարապետութիւնը», «Գառնիի անտիկ կառոյցների ճարտարապետութիւնը» և այլ գիտական աշխատութիւնները և մենագրութիւնները հարտացրել են հայ ճարտարապետութեան պատմութիւնը: «Գառնիի անտիկ կառոյցների ճարտարապետութիւնը» աշխատութեան համար յետմահու (1984թ.) արժանացել է Թորոս Թորամանեանի անուն մրցանակի:

Տարիների ընթացքում սերունդների համար դարերի խորքից վեր խոյացաւ Գառնիի տաճարը, որի համար յուշարձաններ վերականգնող ճարտարապետների մէջ առաջին և միակը արժանացաւ Հայաստանի պետական մրցանակի (1975 թ.): Ճարտարապետը մինչ այդ գիտութեան զարգացման գործում ունեցած մեծ աւանդի համար պարգեւատրւել է «պատմունջան» շքանշանով (1971 թ.):

Յուշերի ու յիշողութիւնների, զնահատականների արանքում նշեցին նաեւ Ա. Սահեանի գրադեցրած պաշտօնները և ղեկավարած յանձնաժողովները, մանկավարժական գործունէութիւնը, ՀՍՍՀ արւեստի վաստա-կաւոր գործիչը նաեւ մեծ մանկավարժ է եղել և սիրւած ուսուցիչ: ■

\* Երուան էլ Թուրքիայի դեսպաններ են եղել : «Ազգ»

# Կանանց պատմություններ

Ī áó/»Ù ³ BĚ³ ñÑÁ x³ Ý³ äÇ, Ā¿  
áí ¿ Ñ³ Ū

Հայ կանանց միջազգային միութեան հիմնադիր- նախագահ Իւա Մեծօրեանն վերջերս երեւանում էր գտնուում: Կազմակերպութեան հայաստանեան կենտրոնի հետ նրանք մեծ պատասխանատութեամբ նախապատրաստուում էին երրորդ համագումարին:

Ձեր ուշադրութեանն ենք ներկայացնում Իւա Մեծօրեանի պատմությունը:

-Ութ տարեկան էի, որ իմացայ ջարդի մասին: Տունից մեջ չէի խօսեր: Չէին ուզեր, որ երեխաներս տխուր մեծ-նան: Հայրիկս շատ սիրով կը պատմէր Էրկրի մասին: Որ-քան կը պատմէր, այդ սիրուն երկիրն իմս կը դառնար: Որքան իմս կը դառնար, այնքան ատելի կը սիրէի ու ան-վերջ կը խնդրէի պատմել, պատմել...

**«Թուրք ժանդարմները գործն սկսած էին արդէն. տու-նէ տուն ամբողջ արու մարդիկը հաւաքելով, իբրեւ թէ թա-ղի պաշտպանութեան համար որոշ կարգադրութիւն ընելու:**

**Լուսներ թաղի տեղւոյն մնացած բնակչութիւնը կը սպասէր իր մահուան, որ այնքան էլ հեռու չէր»:**

Տարիներ յետոյ հասկացայ, որ երեխաներն ատելի լաւ հայրենասէր կը դառնան, երբ իրենց ծնողներու շուրթերն կ'իմանան հայրենիքի, անոնց ապրումներու, ցաւի մասին: Կարեւոր չէ, թէ ուր կ'ապրին:

Հիմա կը խորհիմ նաեւ, որ ցեղասպանութեան ակա-նատես հայրիկիս պատմութիւններն իմ մէջս արդարու-թեան եւ մարդու իրաւունքներու կողմը կենալու կամք դաստիարակած են: Կարելի է ատիկա պատճառ եղած է, որ պատանեկութեան օրերուն վրաս մեծ ազդեցութիւն թո-ղած էր Մարտին Լիւթեր Քինգը: Կը յիշեմ անոր քարոզ-ները, անոր մահը:

Եւ յաջողեց: Վատահ եմ, մենք ալ պիտի յաջողինք եւ օր մը ողջ աշխարհը պիտի դատապարտէ հայերու ցե-ղասպանութիւնը:

**«... Երիզա քաղաքէն տաս օրէ վերջ Էրզրում հասանք քառական թշուառ վիճակի մէջ:... Չորս օրէ վերջ Մարիդա միշ հասանք: Այստեղ շոգեկառք նստանք Ալեքսանդրա-պոլ գնալու համար:**

Շատ տկար կը զգայինք: Թշուառութիւնն իր անգութ մեր գլխին դրած էր:

... Պիտի գնայինք դէպի Շուշի՝ Ղարաբաղ: Հասած էինք այն տխրահեշակ ճորը, որ ճանապարհի քովերէն կերելիին անճանաչելի մարդոց դիակներ: Մրանք Ղարա-բաղի այն հայ կտրիճներն էին, որոնք իրենց տուն վե-րադարձին անխնայ կտորուած էին առանց բացառու-թեան»:

\* Այս եւ յաջորդ մէջբերումները Իւա Մեծօրեանի հայրիկի՝ Աւե-տիս Մխիկեանի «Տառապանքի ճանապարհներ» գրքից են: 1900-ին Չիմիշկաժազ գիղում ծնած՝ գաղթի, ապա զինարու-թեան մեծ ճանապարհ անցնելով, հասել է ԱՄՆ-ի արեւելեան ափ:

- Մէկ կողմէն իմ մէջ կը հա-տունանար մարդու իրաւունքնե-րու պաշտպանը, իսկ միւս կող-մէն արեւատը միշտ կը ձգէր՝ նկարչութիւնը եւ երգելը: Երկու ուսումն ալ առի:



20 տարեկան դեռ չկայի: Բոստոնի հայկական եկեղեցիի մէջ կերգէի: Ջակ Մեծօրեանը եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրո-ցի տնօրէնն էր: Պատահական բան էր: Ծանօթացանք: Չորս տարի յետոյ ամուսնացանք: Ջակը չթողեց, որ ես աշխատեմ: Ինքն առաւօտ կանուխ գնում էր եւ շատ ուշ վերադառնում: Ամերիկայի մէջ այն ժամանակ (եւ նոյն-իսկ հիմա) գործը տղամարդու երկրորդ կինն էր: Ինձ հա-մար շատ դժուար տարիներ էին: Երգող, նկարող, ակտիւ կենսքով ապրած կինը հոգեկան ի՞նչ բաւարարում կը ստանայ ամբողջ օրը միայն տունի գործերով զբաղւելով:

Հոգուս խռովքն արտայայտելու միջոցը ինքն իրեն գտնու-եցաւ: Սկսեցի երգեր գրել: Հարկաւէ հայկական: Յետոյ պրոֆեսիոնալ երաժիշտներու հայկական խումբ կազմա-կերպեցի յառաջադիմականներու հովանու տակ: Տօն օ-րերուն իրար գլխի հաւաքելու առիթներ կը ստեղծէինք՝ համերգներ կուտայինք: Շատ լաւ յուշեր ունիմ:

Սովետական Հայաստանի տօնը նոյնպէս կը նշէինք: Հայրենիքէն պաշտօնատու մարդիկ կը մասնակցէին: Հայրենիքը ներկայացնող ամէն մէկին կարօտ էինք: Սփիւռքի համար, սակայն, սոսկալի ժամանակներ էին: Հայերը քաղաքական խմբերու բաժանած էին: Դժուար էր այն անձերու համար, ովքեր Սովետական Հայաստանի հետ կապ կունենային: Անմիջապէս կարմիր կը կոչէին: Երիտասարդ հայերու համար դա անհասկանալի էր: Եւ շատերը, այդ վիճակից խուսափելով, օտարացան...

Ինձ համար Հայաստանը Հայրենիք էր: Սրբութիւն էր: Մեծ փափագ ունէի գալ եւ տեսնել...

Առաջին անգամ 1972-ին եկայ: Եկայ ու հայրենիքս ողջ-առողջ տեսայ: Եկայ ու Ջակին էլ հետս բերի: Ըսի՝ ե-թէ չգաս, ես մենակ պիտի երթամ: Ինքը շատ զբաղած էր, հայ մշակոյթով շատ էլ տարած չէր, բայց եկաւ: Եկաւ ու ինքն էլ ուժեղ կապեցաւ: Այլեւս համոզելու պէտք չկար: Ամէն երկու տարին մէկ գալիս էինք: Այնքան ջերմութիւն, այնքան բարեկամներ գտած ենք Հայաստանի մէջ ...

**«Քառական երկար քալել վերջ, վերջապէս հասած էինք Թիֆլիսի արարձանը, որ Նաթրուլուխ կը կոչւէր: Խճողած ժողովրդին մէջ տիֆը իր մահացու թաթը դրած էր, որու զոհը եղաւ նախ մայրս ու մի քանի ընկերներ»:**

- Կնոջ ամենէն մեծ երջանկութիւնը մայրութիւնն է: Սակայն, Աստուած ինձ զուակ չէր պարգեւում: Անհամ-բէ՛ր էի: Չգիտեմ: Ամուսնութիւնէն հինգ տարի անց յոյգ երեխայ որդեգրեցինք: 3,5 ամսայ աղջիկ եւ տղայ՝ Ռուք եւ Դաւիթ: Խառը ազգութիւններում (այն ժամանակ հայ երեխաներ հնարատր չէր որդեգրել): Երկու տարի վերջը մեծ անակնկալ եղաւ: Տղայ ունեցանք՝ Ջոնը: Յետոյ Մարկը ծնեց: Այսպէս, չորս երեխաներու մայր դարձայ: Նպատակս դարձրի նրանց լաւագոյնս մեծացնել:

Բոլորը սկիզբէն ամէն բան գիտէին: Հոն իրաւունք չունիս ճիշտ չըսելու: Որովհետեւ, եթէ վերջը իմացի, շատ խնդիրներ կըլլան:

## Հասարակական

Երեխաներս միմեանց շատ կապում են: Միայն աղջիկըս սկզբում իրեն շատ վատ զգաց, որ իր իսկական մայրը հրաժարել է իրենից: Ինչ ըսեմ, ամեն բան ըրինք, որ հայ մեծնան: Մինչեւ հիմա գոյգերս կապում են հայ մշակոյթին: **Այսպէս ես իմ երջանկութիւնը շինեցի եւ միաներին էլ ինձ հետ տարայ:** Հարկաւ, շատ դժար էր չորս երեխաներին մենակ մեծացնել: Երբեմն մայրս կօզնէր: Այն ժամանակ նա էլ շատ հեռու կապէր:

Այսօր ես կը քաղեմ այդ դժարութիւնէն սերած քաղցր պտուղները: Երեխաներս բոլորն էլ ուսում առան, լաւ ընտանիք ունին: Ռուբը շուտով գոյգ գաւակ կունենայ: Մարկըն իր ընտանիքով մեզ հետ կապրի: Պզտիկ Իւս Մարիան լեցուցած է մեր մեծ տունը:

Բայց երբեմն կը խորհիմ, թէ ինչո՞ւ այդպէս եղաւ: Չորս երեխայ ունիմ, երեքը օտարի հետ ամուսնացած են: Միայն պզտիկը՝ Մարկը, Հայաստանէն աղջիկ առաւ: Ես իրենց ըսի. «Լաւ մտածէք, ես չեմ թելադրել, որ վաղը չըսէք, թէ ձեր երջանկութեանը խանգարեցի: Բայց երբ օտարի հետ ամուսնանաք, բոլորովին կօտարանաք»: Հայ երիտասարդներու օտարացումը... Միշտ ինձ մտատանջել է...

**«...Հայ եւ թուրք սահմանագլխին կռիւները արդէն սկսած էին, եւ ես, որպէս հայորդի, կռիւ ճակատում պիտի ըլլայի:**

**... Մերոնք կառաջանային: Պատերազմը յաջող վիճակի մէջ էր, քննամին նահանջել սկսած էր: Եւ ահա, լուր եկաւ, որ փամփուշտի շատ պակասութիւն կայ: Մերոնք էլ սկսան նահանջի դիմել: Թշնամին խրախուսած էր մեր վիճակէն յարձակումն սկսաւ:**

**... Մտրհանդակը սրարշաւ ուղղակի հրամանատարի վրանը գնաց: Հինգ վայրկեան վերջ նահանջի հրաման եկաւ մեզ: Կարսը ինկած էր»:**

- Մայր Հայաստանը...

Երազի նման է: Չերեւակայեցինք, թէ այսքան շուտ կը տեսնենք ազատ, անկախ հայրենիք: Եւ նոյն ժամանակ երկրաշարժ, պատերազմ:

Մենք սոսկացինք:

Սփիւռքը կրկին պառակտւած էր՝ կուսակցութիւններու, եկեղեցիներու: Եկեղեցին համախմբում, միասնութիւն կը քարոզէր, բայց խօսքեր էին միայն:

1990- ին իմ մէջ գաղափար ծնեց կիներու կազմակերպութիւն ստեղծել: Նպատակն ինձ համար յստակ էր: Տարբեր կուսակցութիւններու յարող կանանցով հայ կանանց միջազգային միութիւն ստեղծել եւ միասին աշխատել, ամենքով օգտակար ըլլալ հայրենիքին: Եւ յետոյ՝ կանանց մէջ արթուն պահել հայ ոգին: Իսկ մայրը հայ մընալով՝ իր գաւակները հայ կը մեծցնէ:

Այս միտքերս կիսեցի բոստոնցի յարգարժան երկու տիկնանց՝ ռամկավարներու թերթի (անգլերէն) խմբագիր Բարբարա Մերկրեանի եւ դաշնակցական թերթով Օլգա Բրուտեանի հետ: Երկուքն ալ շատ լաւ ընդունեցին:

Միութեան առաջին ժողովին (Բոստոն) միայն ԱՄՆ- են եւ Հայաստանէն էին: Բայց շուտով մեր շուրջը շատ կիներ խմբեցան:

1994-ին տարբեր երկրներէ 200 պատիրակներ եկան Լոնդոն՝ մեր առաջին համագումարին: Երկրորդը եղաւ 1997- ին, Փարիզում: Սկիզբէն կերպէինք, որ միութեան 10-ամեակին այս կոնֆերանսը Երեւանում ըլլայ: Սփիւռքէն մօտ 100 պատգամատուներ եկան: Շատերը՝ առաջին անգամ: Սենատոր լինի, բժիշկ, թէ տանտիկին, ամէն մե-

կրին իր աւանդը բերաւ: Մէկս միւսիս օգնելով, մէկս միւսիս լրացնելով, նիւրած ենք մեր հիմնական նպատակներին: Անդրադարձանք նաեւ տարբեր երկրներու մէջ հայ կիներու վիճակին: Քանի որ ես շատ եմ գնում- գալիս, աւելի ծանօթ եմ հայաստանցի կիներու կեանքին:

Այս անգամ մինչ Հայաստան գալս Հալէյ քաղաքում (Բեռլինի մօտ) հրաւիրւած էր միջազգային մի կոնֆերանսի, ուր ելոյթ ունեցայ եւ խօսեցի հայրենիքում եւ ըսփիւռքում հայ կիներու վիճակի մասին: Շատ ժամանակ կրեսն՝ ի՞նչ կուտան այդ համագումարները: Նախ եւ առաջ կը ծանօթանանք իրարու փորձառութիւններուն:

Հայաստանի մէջ հիմա ծանր վիճակ ստեղծուած է: Պզտիկ էի, բայց լաւ կը յիշեմ Ամերիկայի այն սեւ օրերը: Մարդիկ գործ չունէին, անօթի էին, յուսահատ : Աւելի վատ էր, քան հիմա Հայաստանի մէջ: Բայց նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը փրկեց ԱՄՆ-ը մեծ ճգնաժամէն: Գիտէ՞ք ինչու ինքը յաջողեց: Ամէն տեղէն իր շուրջը բե-րեց ամենալաւ մասնագէտները, ամենէն ազնիւ մարդ-կանց: Եւ կը մտածեմ, որ Հայաստանն ալ պիտի յաջողի:

Ու բոլորս պիտի աջակից ըլլանք:

Մեր կազմակերպութիւնը բաւական աշխատած է: Հայրենիքի հետ կապում նոր շատ ծրագրեր քննարկեցինք: Չեմ ուզեր կոնֆերանսէն առաջ խօսել այդ մասին: Սկզբում, երբ նոր կը ստեղծէինք այս միութիւնը, ամուսինս շատ նեղեցաւ: Կըսէր՝ ասիկայ քո գործը չէ: Հիմա կը զգամ, թէ շատ հպարտ եւ եւ ուրախ: Կը զգամ թէ աւելի շատ յարգանք ունի, որովհետեւ արդիւնքը կը տեսնի:

Ես շատ երջանիկ եմ, որ տարիների ընթացքին, յարթե-լով ընտանեկան դժարութիւնները, կրցանք մինչեւ հիմա յարգել եւ սիրել զմիմեանց: Այն Ջակը, որ ժամանակին ինձ թոյլ էր տար աշխատանքի դուրս գամ, հպարտութեամբ կը համաձայնէ իմ ուղեւորութիւններուն: Շուտով Օլգան եւ ես պիտի պտտենք տարբեր երկրներ մեր կիներու հետ ծանօթանալու, մեր կենտրոնները բացելու համար:

... Երկրաշարժէն յետոյ Լուիզ Միմոնը ինձ ԱՄՆ-ի Նեո Ինգլիմոյի շրջանի Հայ բարեգործական ընդհանուր միութեան նախագահ նշանակեց: Եւ 1990- էն սկսած ես տարին երկու անգամ տարբեր ծրագրերով Հայաստան կը գայի: Ամուսինիս հետ կամ առանց նրա: Եւ շատ մօտէն ծանօթացայ հասարակ ժողովուրդի տառապանքներուն:

Այդ ընթացքին եւ դարաբաղեան խնդրի մասին երեք վաւերագրական Ֆիլմ նկարեցի: (Գրանցից մէկը ԱՄՆ-ում մրցանակ շահեց): Աշխարհը լաւ չգիտէր, թէ ինչ պատերազմ է դա: Նպատակս իրական փաստերը ամերիկացիներուն, ամենքուն հասցնելն էր: Այն ժամանակ ամէն տեղ թուրքերը մեծ պրոպագանդ ունէին: Ես հանդիպեցի Շահումեանի շրջանէն դուրս քշուած հայերուն, նրանց նկարեցի: Այդ օրերուն Գորիսի շրջանին 22-23 տարեկան տղաներու հանդիպեցայ: Երկուսն ալ՝ ամուսնացած: Իրենց կիներուն, գաւակներուն թողել, կամովին եկել էին հայրենի հողը պաշտպանելու: Մէկը Էջմիածինից էր, միւսը՝ Երեւանից: Ըսին՝ եթէ մենք չպաշտպանենք մեր սահմանը՝ այսօր այստեղ եմ, վաղը՝ Երեւան:

Միասին մեր սուրբ հողի կենացը խմեցինք, մեր անուշ հայրենիքին նիւրած երգեր երգեցինք...

Ես ինձ այնքան բախատուր զգացի, որ ճանաչեցի այդ տղաներուն...

Ես կուզեմ աշխարհը ճանաչի, թէ ով է հայը... ■

«ՀՀ օրաթերթ»  
Անահիտ Հայրայեան  
17.10.00

## Ազգային աշխատանքների թափանցիկությունը մեր համայնքի զարգացման չափանիշն է

*Պ.Շ. Պատգամաւոր՝  
Դոկտ. Դուբիկ Սարգսրեան*



Իրաքանչիւր պաշտօնական մարմնի աշխատանքների թափանցիկությունն նշանակում է, որ ժողովրդին տեղեակ պահելով այդ մարմնի բոլոր հարցերին ու աշխատանքներին՝ նրան մասնակից դարձնի մտքերի փոխանակությանը, վեճերի ու խնդիրների քննարկմանը: Իրանահայ համայնքում ազգային աշխատանքների թափանցիկությունը կը պահպանի այն ժամանակ, երբ մեր համայնքի հասարակական կեանքում Պատգամատրական Ժողովում եւ ազգային բոլոր մարմիններում արծարծող խընդիրների մասին պարբերաբար կատարող զեկայցներով տեղեկացւի համայնքին, զեկայց ներկայացնի կատարած եւ չկատարած աշխատանքների մասին, ստեղծի այնպիսի մթնոլորտ, որտեղ լսելի լինի ժողովրդի ձայնը, հաշի առնի նրա առաջարկները: Մի խօսքով՝ պէտք է հաշի նստել հանրային կարծիքի հետ:

Աշխատանքների թափանցիկութեան եղանակները այժմ կիրառուում են բոլոր ժողովրդավար հասարակությունների ու մարմինների կողմից, որպէսզի, ժողովրդի հովանաւորութիւնը շահելով՝ յենեն հէնց ժողովրդական ուժերին՝ ապահովելով ժողովրդի հսկողութիւնն ու քննադատութիւնը իրենց աշխատանքների նկատմամբ: Ասպարէզ ստեղծել օգտագործելու ողջ համայնքի եւ նիւթական եւ բարոյական օժանդակութիւնները: Մա շատ կարեւոր պէտք է համարել իրանահայերիս ներկայ վիճակի համար, որովհետեւ, կարծում ենք, որ մեր եկեղեցին ու ազգային դրածները ժողովրդավարական են, ուստի այդ համոզմունքը պահպանելու համար, ինչպէս նաեւ համայնքում առկայ դժարութիւններին ճիշտ լուծում տալու համար, այժմ առաւել քան երբէք, անհր-րաժեշտ է պահպանել ազգային աշխատանքների թափանցիկությունը: Այն պէտք է ցոյց տրի գործնականում, որպէսզի դրան հաւատան թէ՛ մեր համայնքի անդամները, թէ՛ օտարները:

Մեր Պատգամատրական Ժողովը ինչպէ՞ս կարող է պահպանել այս կարեւոր ժողովրդավար արժէքը՝ թափանցիկութիւնը: Կարծում են, ՊՇ կիրառելով հետեւեալ քայլերը կը կարողանայ իր աշխատանքների թափանցիկութիւնը իրականացնել՝ 1-Բոլոր դռներաց ՊՇ նիստերում իրատունք տրի մեր համայնքի հետաքրքրող ազգայինների (յատուկ կարգով) մասնակցել են , որպէսզի մօտիկից ծանօթանան Պատգամատրական Ժողովի կառոյցին, աշխատաձեւին ու քննարկող հարցերին. տեսնեն, թէ ինչպիսի մթնոլորտ գոյութիւն ունի իր համայնքի ամենաբարձր մարմնում, որ իրենց երբեք խորք չզգան այդ մարմնի նկատմամբ: 2- Պարբերաբար տեղեկագրեր հրատարակել ՊՇ-ի, Թեմական Խորհրդի, Կըրթական Խորհրդի, Մշակութային մարմնի եւ միւս մարմինների կատարած եւ չկատարած աշխատանքների մասին:

Այս կէտը նշած է եղել թեմի կանոնադրութեան մէջ, բայց դժբախտաբար երբեք չի կիրառուել (յօդած 80-դ): 3- Ըըը-ջաններում եւ թաղերում պարբերաբար հանդիպումներ կազմակերպել պատգամատրների ու ժողովրդի միջեւ: 4- Պարբերաբար կազմակերպել կլոր սեղաններ, որտեղ տարբեր տեսակետների տէր մարդիկ, տարբեր հարցերի շուրջ ունենան երկխօսութիւն ժողովրդի առջեւ: Այս 3-րդ եւ 4-րդ կէտերը նոյնպէս նշած են եղել կանոնադրութեան մէջ, բայց չեն կիրառուել (յօդած 25 եւ յօդած 76): 5- Բոլոր նամակները, որոնք տրուում են ՊՇ-ի դիւանին՝ անխընդիր, առանց գրաքննութեան ընթերցւեն ՊՇ-ում, եւ հարկ եղած պարագայում քննարկման ենթարկւեն:

Տեսականօրէն բոլորս կողմ ենք աշխատանքների թափանցիկութեանը, բայց մեր համայնքում եղած անցեալի դառը փորձը ցոյց է տալիս, որ կան որոշ ազգային ղեկավար մարդիկ, որոնք ձեռացնում են, թէ կողմ են աշխատանքների թափանցիկութեանը, բայց գործնականում աշխատում են տարբեր ձեւերով շրջանցել այն, անտեսել կամ էլ, տարբեր անհիմն պատճառներով խուսափել դրանից:

Երբ մի համայնքի, կամ հասարակութեան աշխատանքները թափանցիկ չեն կամ համայնքի ղեկավարութիւնը կողմ չի դրան կամ, աւելի շուտ, զերադասում է զաղտնապահութիւնը՝ այդ համայնքի մարդկանց մօտ աստիճանաբար առաջանում է անտեղեկութիւն, անտարբերութիւն եւ հնարաւոր է նաեւ հակադրաժողովրդական ազգային մարմինների նկատմամբ: Մենք չպէտք է վախենանք ժողովրդի պահանջկոտութիւնից ու քննադատութիւնից, դրանք առողջ հասարակութիւն ունենալու անհր-րաժեշտ պայմաններից են: Մենք պէտք է խրախուսենք մեր ժողովրդին, որ քննադատաբար մօտենան տարբեր հարցերին եւ մասնակից լինեն տարբեր հարցերի քննարկմանը, որի համար ազգային մարմինները պէտք է հնարաւորութիւններ ստեղծեն:

Երբ ժողովուրդը անտեղեկ է քննարկող առօրեայ հարցերից, չզիտի թէ ինչպիսի մօտեցումներ գոյութիւն ունեն այդ հարցերի լուծման համար, երբ չզիտի իր ազգային ու հասարակական կեանքի հետ առնչող հարցերի շուրջ տարբեր տեսակետների մասին, նա չի կարող դատել թէ ո՞րն է ճիշտ եւ ո՞րն է իր օգտին, չի կարող մասնակից լինել նման հարցերի քննարկմանը եւ նման պայմաններում երբեք եւ ոչ մի դէպքում թե ու թիկունք չի լինի ազգային մարմիններին: Նշած պայմաններում անհնարին է պահանջել ժողովրդից, որ մասնակցի ազգային կեանքին, անտարբեր չմնայ, դրանք անհիմն սպասելիքներ կը լինեն ու միայն լոզունգային բնոյթ կը կրեն:

12-րդ Պատգամատրական Ժողովը իր փորձը եւ մօտեցումը այս հարցի կապակցութեամբ ղեռ ցոյց չի տել, թէ ինչքան զարգացում ենք ապրել 14 տարում:

Մեզ մնում է մանրամասն հետաքրքրութիւն ցուցաբերել, ուսումնասիրել մեր պատգամատրների մօտեցումները, մեր գնահատականները ներկայացնել պատգամատրների աշխատանքի մասին: Ժողովրդի եւ յատկապէս համայնքի մտաւորականութեան պարտականութիւնն է, որ հետեւելով բոլոր հարցերին, քննարկման ենթարկւեն դրանք: Յոյսով ենք, որ այս ժամանակահատուածում ցոյց տանք, որ մենք եւս զարգացում ենք ապրել եւ կողմ ենք մեր բոլոր մարմինների՝ յատկապէս Պատգամատրական Ժողովի աշխատանքների թափանցիկութեանը: ■

## Երկրաշարժ

# ԵՐԿՐԱՇԱՐՄԸ ԵՒ ՆՐԱ ԱՌԱՋԱՅՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գարեր շարունակ բնութեան ամենաեզոք երեւոյթներից մէկը՝ երկրաշարժը, ահ ու սարսափ է սփռել, դառնալով հսկայական աղէտների ու զոհերի պատճառ: Հնում մարդկութիւնը տարբեր բացատրութիւններ է տւել՝ այս երեւոյթը վերագրելով տարբեր գերբնական ուժերի: Անտիկ ժամանակաշրջանում յոյները վերագրում էին ծովերի տիրակալ Պոսէյդոնին, հռոմէացիները՝ Նեպտունին: Ծապոնացիները կարծում էին, թէ իրենց կղզիները գտնուում են հսկայական ձկան վրայ եւ երկրաշարժը բացա-

(1988թ. դեկտ. 7-ի Հայաստանի երկրաշարժի առիթով)

հասնում է մի պահ, որ ապարները չեն դիմանում այդ լարածութիւններին եւ տեղի է ունենում երկրակեղեւի խզում՝ երկրաշարժ:

Հրաբխածին երկրաշարժերի պատճառն այն է, որ երկրի ընդերքում հեղեղուկ վիճակում գտնուող հսկայական զանգւածները՝ մագման, ճնշում են գործադրում երկրի մակերեւոյթի վրայ, եւ դա կարող է նոր երկրաշարժերի պատճառ դառնալ:

Երկարատեւ գիտական ուսումնասիրութիւնները, պատմական եւ վիճակագրական տւեալները ցոյց են տւել, որ բնական ծագման երկրաշարժերը, որպէս կանոն, տեղի են ունենում առանձնացած որոշակի շրջաններում, որոնք կոչւում են սէյսմոակտիւ գօտիներ: Դրանցից ամենաակտիւը Խաղաղովկիանոսեան օղակաձեւ գօտին է, որին բաժին է ընկնում երկրագնդի երկրաշարժերի 81 տոկոսը:

Տրանսասիական կամ ալպիական գօտին, որին բաժին է ընկնում աշխարհում տեղի ունեցող երկրաշարժերի 17 տոկոսը, ձգւում է Ինդոնեզիայից Հիմալայներով դէպի Միջերկրական ծով: Այս գօտում է գտնուում Հայաստանը եւ այս գօտում տեղի ունեցած ցանկացած երկրաշարժ, այդպէս թէ այնպէս, ազդում է Հայաստանի սէյսմիկ իրադրութեան վրայ: Այստեղ տեղի ունեցող երկրաշարժերի հիմնական պատճառն է արաբական եւ երասիական սաւերի շարժումը, որի հետեւանքով առաջացած լարածութիւնները հասնելով կրիտիկական մեծութեան պարպւում են, եւ տեղի է ունենում երկրաշարժ:

Միայն լարագոյնս ուսումնասիրելով երկրաշարժը եւ նրա առաջացման պատճառները, կարելի է ճիշտ կառավարել սէյսմիկ ռիսկի մագնետումը սէյսմավտանգ գօտիներում: ■

«Ազգ» օրաթերթ



տըրում էին այդ ձկան շարժումներով: Հին չինացիները ենթադրում էին, որ երկրագունդը գտնուում է հսկայական ցլի մէջքին, որի շարժումները ստիպում էին երկրին դողդոջալ: Այս հարցը հետաքրքրել է մտահոգել է շատ յայտնի գիտնականների եւ փիլիսոփաների, որոնք փորձել են տարբեր բացատրութիւններ տալ այս երեւոյթին:

XIX դարից՝ գիտնականները սկսեցին լրջութեամբ ուսումնասիրել երկրաշարժերի առաջացման պատճառները, հասկանալով, որ բնակչութեանն այդ արհաւիրքից փրկելու, հազարատոն զոհերից եւ աւերածութիւններից խուսափելու համար նախ եւ առաջ պէտք է հասկանալ, թէ ինչ է երկրաշարժը եւ որոնք են դրա առաջացման պատճառները: Հենց այդ ժամանակաշրջանում էլ գիտնականների մէջ ձեւաւորւեց այն կարծիքը, որ երկրի ընդերքում ընթացող տեկտոնական պրոցեսներն են երկրաշարժերի առաջացման հիմնական պատճառը: Երկրաշարժերի առաջացման պատճառ են նաեւ հրաբուխները, տողանքները, երկրակեղեւում բնական ճանապարհով առաջացած դատարկութիւնների փլուզումները: Մրանք երկրաշարժերի առաջացման բնական պատճառներն են: Կարող են լինել նաեւ երկրաշարժեր մարդու գործունէութեան հետեւանքով, օրինակ, տարբեր տիպի պայթիւնների կամ երկրի ընդերքի երկարատեւ շահագործման հետեւանքով:

Տեկտոնական ծագման երկրաշարժերը բնութեան մէջ ամենատարածածն են եւ կազմում են բոլոր երկրաշարժերի 95 տոկոսը: Այս տիպի երկրաշարժերի պատճառներըն ապարներում կուտակւած մեծ լարածութիւններն են,

### Համար 10 խաչբառի լուծած տարբերակը

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	ա	ր	տ	ա	զ	ա	ղ	թ	■	ս	ա	ն	ու	հ	ի
2	ն	■	ա	ղ	ա	մ	ե	ա	ն	■	կ	ա	ն	ա	չ
3	կ	ե	ր	■	մ	ա	կ	ն	ի	չ	■	ն	ե	տ	■
4	ա	ր	ա	մ	■	օ	■	ա	զ	ի	զ	■	լ	ու	օ
5	մ	ա	ղ	ա	զ	ա	ս	ք	ա	ր	■	պ	ի	■	ա
6	■	զ	ր	կ	ա	ն	ք	■	կ	ա	տ	ու	■	ե	օ
7	ա	■	ա	■	զ	ո	լ	ա	■	զ	■	ն	ա	ր	■
8	կ	ա	մ	ք	■	ց	ե	ն	տ	■	ր	ա	լ	ե	լ
9	ն	ն	■	ա	ք	ա	լ	■	ե	տ	ա	ղ	ա	ս	■
10	ա	ն	խ	ն	ա	յ	■	ք	ս	ա	ն	■	ն	ու	■
11	կ	ա	փ	ա	ր	ի	չ	■	լ	ր	տ	ե	ս	ե	լ
12	ա	■	ո	ք	■	ն	ի	հ	ա	ր	ե	չ	■	ս	■
13	պ	ա	ղ	ե	լ	■	ն	ա	կ	■	լ	ու	ս	ա	ն
14	ի	ք	■	օ	ու	ս	ա	կ	ա	ն	■	ս	ո	յ	ն
15	ն	ի	զ	■	ս	ի	ր	ա	ն	■	կ	տ	ո	ի	ն

«Մայրենի լեզու»  
Դասական Ուղղագրութեան  
Կանոններ

ՌաՅայել Իշխանեան

Օ՞՞՞՞՞՞՞

Ուղղագրութիւնը յիշողութիւն է, պէտք է բառերի գրութիւնը յիշել տառ առ տառ: Կան նաեւ ուղղագրական կանոններ, որոնք օգնում են բառապատկերները յիշելու: Ստորեւ բերած են դասական ուղղագրութեան այն հիմնական կանոնները, որոնք տարբեր են Հայաստանում եւ ԱՊՀ-ի հայաբնակ այլ վայրերում այժմ գործող ուղղագրութիւնից:



Դասական ուղղագրութիւնը գլխաւորապէս երեք դժուարութիւն ունի. 1) պէտք է յիշել բառասկզբում / գրող, բայց *հ* արտասանող բառերը (յատուկ, յաջող, յանցանք եւ այլն): 2) պէտք է յիշել բառամիջում *է* ունեցող բառերը (կէտ, կէս, սէր եւ այլն), 3) պէտք է յիշել բառամիջում *օ* ունեցող բառերը (կարօտ, աղօթք, մօտ եւ այլն): Այս ձեռնարկում բերած են երեք խումբ բառերի ցուցակները: Դասական ուղղագրութեան միւս տարրերը ատելի դիւ-րին են յիշում:

Չեմնարկում կան կրկնութիւններ. մի շարք բառերի գրութեան որեւէ կանոնը յիշելու համար, այն լուսաբանւած է երբեմն երկու, նոյնիսկ երեք անգամ, տարբեր տեսանկիւններից:

Պէտք է նկատի առնել նաեւ, որ դասական ուղղագրութեանը վերադառնալու խնդիրը հեշտի կամ դժարի հետ չէ, որ առնչւած է: Դասական ուղղագրութիւնը հայ մշակոյթի մի անբաժան հատւածն է, որ մեր ժողովրդից խլեց 1922 թ.: Ինչպէս որ այժմ ջանում ենք վերականգնել մեր ազգային դպրոցը, հայոց ճշմարիտ պատմութիւնը, հայկական շատ սովորութիւններ, օտոներ, ազգային մտածողութիւնն առհասարակ, այդպէս էլ ճիշտ կը լինի վերականգնել մեր դարաւոր ազգային ուղղագրութիւնը:

Դասական ուղղագրութեամբ գրելով՝ սկզբնական շրջանում, անշուշտ, որոշ դժարութիւններ կը լինեն, սըխալներ կանենք: Բայց դա էական չէ, քանի որ աստիճանաբար վարժելով՝ սխալները կը նւագեն, կը վերանան: Դասական ուղղագրութեանն անցնելու դէպքում հնարաւոր կը լինի նաեւ նրա կանոններում որոշ բարելաւումներ կատարել:

Օ-Շ »Օ Ի -Շ . ճձՁԱՇՅԻԱ

Ինչպէս հայոց դասական այբուբենն է ցոյց տալիս, այժմ տարածում գտած այբուբենից դուրս է մնացել *Ք*, *ւ* տառը, փոխարէնը արհեստականօրէն այբուբեն են մըտ-ցել *աւ*, *ւ* նշանագրերը, որոնց իրականում երկու տառերի միացութիւններից են կազմւած, *ւ-ը* *ե*, *ւ* տառերի միացումն է, *աւ-ն*՝ *ա*, *ւ* տառերի:

Մաշտոցը *Ք*, *ւ* տառը (կոչւում է յիւն կամ վիւն) գրել է *ց* եւ *փ* տառերի մէջ: Նոր ուղղագրութեան պաճշտպաններն

այդ տառը հանել են մաշտոցեան այբուբենից: Դասական ուղղագրութիւնը վերականգնելիս առաջին գործը պէտք է լինի *ւ* տառը նորից իր տեղը դնելը: Այդ տառի գործածման օրէնքը հետեւեալն է: Բառասկզբում այն երբէք չի գրում: Բառամիջում եւ բառավերջում *ա*, *ե*, *ի* ձայնատրներից յետոյ *վ* լսելիս գրում է *ւ*, ինչպէս՝

աւան  
աւարտ  
աւել  
աւետել  
բաւական  
բաւարար  
գաւաթ  
գրաւել  
գաւիթ  
խաւար  
սարկաւագ  
Արագագրութեան  
միացում է *ւ*-ին եւ  
գոյանում է *ւ* կրճատգիրը կարելի է գրել՝  
  
նակ  
և  
անձրև  
բարև

անձրեւ  
բարեւ  
բեւեռ  
Երեւան  
Մեւան  
եւ  
նաեւ  
կարեւոր  
հեւալ  
ձեւ  
տերեւ եւ այլն:

դէպքերում *ե*-ն կրճատգիրը այդպէս կարելի է գրել՝

բևեռ  
Երևան  
Սևան  
անձրև

Շար. 1

**ՄԵՐՆ ՈՒՐԻՇ Է ...**

ԳՐԱՎԵՐՁԻ ՆՈՐ ՏԱՐԲԱՅ  
ՇՔԵՂ ԳԻՄՆԱՌՈՐՈՒՄ  
ՐԱՅՅԻ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ  
ԵՐԳԻՉՄԵՐ՝ ՓԱԹՐԻԿ ԵՒ ՄԵԻԱԿ

ՄԱՍԿԵԿԱՆԵՐ, ԶԻՐՈՍԱԼԻՔՆԵՐ...  
ՁՄԵՆ ՊԼՊԻԿ ԵՒ ՁԻԻՆ ՍԵՈՒԵՐԿ  
ՍԼԱԿԱՆԱՂ, ՎԻՏԱԿԱՆԱՂ ԵՒ ...

ԿԻՐԱԿԻ ՅԻ ԳԵԿԵ, ՈՂԷՅ ԵՐԵԿՈՅ, ԺԱՄԸՑԻՑ

ՏՈՄՍԵՐԸ ԿԱՐՈՂ ԷՔ ՍՏՄԵԱԼ  
ՄԻԱՅՆ ԳՐԱՄԵՆԵԱԿԻՑ  
ՀՏՈՒ. 7833726

Շ.Ս.Ս. ՐԱՅՅԻ  
ՀԱՄԱԼԻՐ

ՏԾՅ Թ ԷԻ Յ ԿԱ »Է ԲՅ Ի ԷՇՆ»ՕՇ »Օ ԱԿ՝ ԳՕԿ»ՕՇ՝ ԳՆՆ Զ Ե  
ՇՍ »ՆԻ ՆՆՆ՝ ՆՅ Թ»ԿՇՍԱ՛

Հարցազրոյց թաւջութակահար՝  
Մահա Ղասեմիի հետ

Հ. Կը խնդրենք Ներկայացնել Ձեզ:

Պ.- Մահա Ղասեմի, ծնել եմ 1979 թականին: 1990 թականին ընդունեցի «Երաժշտութեան Ինստի-



տուտ»: Դրանից առաջ ծանօթ էի երաժշտութեան արւեստին, քանզի ծնողներս, եւ եղբայրս իրենց ժամանակին երաժշտութեան ուսանող են եղել: Թաւջութակ էի նագում, որին ընտրել էի անձամբ եւ խոստանում եմ այդ նագարանով նագելը մանաւանդ առաջին քայլերում ինձ համար դժար էր: Սկզբում ինիստիտուտում ինձ թոյլ չէին տալիս այդ նագարանով նագել, սակայն իմ համառումի եւ պնդումների շնորհիւ, երկու շաբաթ անց համաձայնեցին: Իմ երաժշտութեան դասատուն դարձաւ՝ պրն. Դաւոդ Չաֆարին: 1996-ին «Երաժշտութեան Ինստիտուտ»-ի վկայական ստացայ: Ուսանողական տարիներին համագործակցում էի մի քանի խմբերի հետ, որոնց շարքում էին՝ «Ֆարհանգարայի» սիմֆոնիկ, «Ռադիոյի» սիմֆոնիկ, «Իրան-Աւստրիա Միութեան» սիմֆոնիկ (խմբի ղեկավար Թումաս Քրիստիան) խմբերը: 3 տարի համագործակցեցի վերոյիշեալ խմբերի հետ: 1996-ին մասնակցեցի հեռուստատեսային նկարահանման: Մակայն եղածը ինձ չէր բարարում, զգում էի գործս անարար է, ուստի սկսեցի ուսումնասիրութիւններ անել: Ուսումնասիրութեան ընթացքում Հայաստանի «Միմֆոնիկ» խումբը Իրան ժամանեց: Ներկայ եղայ նրանց ելոյթների: Նրանց ելոյթները ինձ վրայ մեծ տպաւորութիւն գործեց, ուստի որոշեցի երաժշտական ուսումս կատարելագործել Հայաստանում: 1996 թականի օգոստոսի 20-ին արդէն Երեսանում էի: Դիշտն ասած մի քիչ էլ

ուշացել էի, բայց այդուհանդերձ նրանք իմ նկատմամբ սիրալիր վերաբերմունք ցուցաբերեցին:

Շատ երկրներում արեստի մասնագիտական առարկաներին այնքան էլ կարելութիւն չեն տալիս: Մակայն Հայաստանում պատկերը հակառակն է:

Սովորաբար Հայաստանում այս առարկայի հաւմար նախապատրաստական դասընթացներ գոյութիւն ունեն, որոնց ուսանողը պարտաւոր է մասնակցելու: Մակայն քանի որ ես արդէն երաժշտութեան վկայական ունեի, ինձ թոյլատրեց չմասնակցել այդ դասընթացներին:

Քանի որ, հայերէն չգիտէի, տիկ. Արմանուշ Կոզմոյեանին յանձնարարեցին ինձ հետ հայերէն պարապել, որը շաբաթը 3 անգամ (անէն անգամ 4 ժամ) պարապում էր ինձ հետ: Այդ պարապումների շնորհիւ կարողացայ մասնագիտական ուսումս շարունակել եւ առօրեայ գործերս կարգաւորել: Այս էլ ասեմ Հայաստան գնալուց առաջ Թեհրանում «Նայիրի» գրախանութից գնել էի մի գիրք՝ «Հայերէն սովորենք» անուն տակ: Այդ գիրքը իր հերթին օգտաւէտ եղաւ: Պարզ է երբ մի երկրում ես ապրում, որ քո լեզուով չեն խօսում, ունեն տարբեր մշակոյթ, կենցաղ եւ սովորութիւններ, սկզբում մի քիչ դժարանում ես:

Այստեղ աւելացնեմ, որ Երեսանում ինձ ասացին որ կարող եմ նաեւ մասնակցել այն դասարաններին, որտեղ դասաւանդում է ռուսերէնով: Եւ ես ընտրեցի հայերէնը, երկու հիմնական պատճառով, նախ հայերէնը ինձ աւելի հոգեհարազատ էր եւ յետոյ սովորում էի Հայաստանում:

Հ. Եթէ նագիչ չդառնայիք, ո՞ր արեստը կընտրէիք:

Պ.Եթէ նագիչ չդառնայի, անշուշտ նկարիչ կը դառնայի: Նկարչութիւնը, իրօք շատ եմ սիրում: Վերջերս աւելի շատ եմ զբաղւել նկարչութեամբ:

Հ. Ձեր ծնողները եւ ամուսինը ինչ-պիսի վերաբերմունք ցուցաբերեցին արեստի եւ դրանով զբաղելու Ձեր նպատակադրութեան նկատմամբ:

Պ. Ինչպէս քիչ առաջ ասացի, ես ծնել եմ մի ընտանիքում, որի բոլոր անդամները նոյնպէս արեստասէրներ էին: Բնականաբար որեւէ խոչընդոտ գոյութիւն չունէր:




# Բաւարարւե՞նք եղածով

Վաչիկ Վարդանեան

Հ. Մ. «Միփան» միութեան «Սկրափի Թաշնեան»-ի անան թատերախումբը 9 ամիսների շարունակաբար փորձերից յետոյ, բեմ հանեց ռուս աշխարհահռչակ գրող Գոգոլի, «Ամուսնութիւն» անուն թատերգութիւնը:

Մեծ էր ակնկալիքը, մանաւանդ այն պատճառով որ խումբը ղեկավարում էր Էջմիածնի «Դրամատիկական Թատրոն»-ի վաստակաւոր դերասան Գրիգոր Ամեանը: Տաղանդաւոր, կարգապահ եւ փորձառու դերասան է Ամեանը: Մակայա դերասան լինելը մի բան է, եւ բեմադրիչ լինելը այլ բան:



Բեմադրիչը անշուշտ իր ցուցումները պիտի փոխանցի դերասանին (տւեալ պարագային դերակատարին) եւ ուշադրութեամբ հսկի խաղարկութեանը, որպէսզի դերակատարը ներկայացնի իրեն յանձնարարած իսկ կերպարը առանց չափազանցութիւնների կամ անհամապատասխան արարքների դիմելու:

Բեմադրիչը պարտադիր ղեկավարում, կարող է որեւէ դերակատարի ցուցումը տալու համար, փորձերի ընթացքում խաղալ նրան յանձնարարած դերը, սակայն թոյլ չպիտի տայ, որ այդ դերակատարը լիովին իր օրինակը ներկայացնի, նոյն այդ շարժ ու ձեւով: Ցաւօք այստեղ ճիշտ հակառակն է ստացել: Դերակատարներից Վահագըն Ազիզեանը, որը ներկայանում էր «Իւան Յոմիչ»-ի դերում, դրա ամենացայտուն օրինակն էր:

Ըստ երեւոյթին «Ֆելկայ»-ի դերում ներկայացող հանրածանօթ Լորիկ Մինասեանը, մոռանում էր իր խօսքերը, եւ հետեւաբար ստիպւած յօրինում էր իր ասելիքը: Բնականաբար դա թողնում է երկու վատ ազդեցութիւններ: Նախ խաղակիցին շփոթութեան էր մատնում եւ երկրորդը այն, որ նոյն դերակատարի լեզուից լսում էր երկու տարբեր ոճով խօսակցութիւն: Եւ դա թոյլատրելի չէ: Դերակատարների խօսքերում հնչում էր շատ գռեհիկ բառեր, որոնք խորք էին մանուաւոր մեր համայնքին: Արւեստագէտ եւ գրականութեան ծանօթ մարդը լուստեղեակ է, որ պէտք չէ անպայման ուղղակի բառը մտքընել նախադասութեան մէջ: Կարելի է իմաստը տալ առանց նմանատիպ գռեհիկ բառերի օգտագործման:

Բեմադրութեան դրական կողմերից էր՝ դերակատարների ընտրութիւնը, ձայների համադրումը, բեմայարդարումը (բացառեալ նկարչութեան հանգամանքը), դիմախորդարումը եւ դերակատարների սահուն խօսակցութիւնը (չհաշուած վերը նշած բացառութիւնը):


Դերակատարներից մասնատրապէս աչքի էր ընկնում Արա Ասլանեանը: Նա իրօք իւրացրել էր «Ժեւակին»-ի կերպարը եւ հանդիսատեսը համոզում էր, որ նա ինքն էր առանց օրինակելու որեւէ մէկին: Արա Ասլանեանը անշուշտ իր առջեւում կուրծնայ մեծ յաջողութիւններ:

Վերջում ցանկալի է մի երեւոյթի մասին ակնարկել, որը իհարկէ չի առնչում բեմադրութեանը: Ըստ երեւոյթին

«Միփան» միութիւնը տարիների փորձառութիւնից յետոյ չի անդրադարձել իր մի ակնյայտ սխալին: Կեանքի փորձը ապացուցել է այն, որ մեր ժողովուրդը առաջնորդւում է իրեն տրւած սովորութիւններով: Մեր սրահներում առհասարակ նստարանները համարակալում են, եւ հանդիսատեսն էլ ըստ դրա համոզում եւ տեղաւորում է իր համարում: Բայց հակառակ դէպքում («Միփան»-ի պարագան) մէկը միւսին սկսում է խանգարել, մեղադրել, նախատել: Այնպէս որ բեմադրութիւնը ւարտում է, սակայն «տեղի» բեմայով խօսակցութիւնը դեռ շարունակւում է: Երբայր ինչն՞ էլ չէ լուծում այդքան տարրական հարցը: ■

## Շարագորոյց Սահա ...

Իսկ ինչ վերաբերում է ամուսնու, թոյլ տւեք յայտնել իմ անկեղծ հիացմունքը: Երբ ամուսնացանք, (իհարկէ ես երաժշտութեամբ էի զբաղում եւ նա տեղեակ էր այդ բանից:) Նա ոչ միայն արգելք չհանդիսացաւ, այլ ընդհակառակն եղաւ իմ ամենամեծ խթանը եւ քաջալերողը: Թող ձեզ չզարմացնի եթէ ասեմ երբեմն, որ նրան թում է թէ ես ծոյլացել եմ այս ասպարեզում ինձ քննադատում եւ նոյնիսկ նախատում է:



Ե. Ձեր կարծիքով արւեստագէտի անհատական ստեղծագործութիւնն ինչքա՞ն դեր ունի նրա յաջողութեան մէջ:

Պ. Իւրաքանչիւր արւեստում անհատական ստեղծագործութիւնը եւ տւեալ արւեստի գիտութիւնը միմեանց լրացցիչ բաներ են: Մէկը առանց միւսի գրեթէ անիմաստ է: Ստեղծագործ արւեստագէտը եթէ չունենայ իր ընտրած արւեստի գիտութիւնը, կատարելագործման հասնել չի կարող եւ ընդհակառակը:

Ե. Եթէ կան ցանկալի եւ չարտայայտուած մտքեր, կը խնդրենք արծարծել:

Պ. Առիթը օգտագործելով, կուզենայի իմ երախտագիտական եւ շնորհակալական խօսքն ուղղելու այն բոլորին, որոնք իմ յաջողութեան մէջ իրենց ներդրումն ունեցան: Կուզենայի շնորհակալութիւն յայտնել յատկապէս ծնողներիս, ամուսնու եւ Հայաստանում ապրող իմ լաւ եւ սրտցաւ բարեկամներին, իմ դասատուներին: Հայաստանը եւ շատ սիրեցի եւ ընդունեցի՝ որպէս իմ երկրորդ հայրենիքը:

Վերջում կամենում եմ շնորհակալութիւն յայտնել ձեզ՝ հարցազրոյցի առիթ ստեղծելու համար: Յանկա-նում եմ «Լոյս»-ին նորանոր յաջողութիւններ: ■

*արցազրոյցը վարեցին Թամիկ Բեշիշեանը եւ Անի Նազարեանը*



# Մշակույթ

## «Նոր Էջ» եւ Նոր էջականներ

(ԻՅ ՌՁՄՅՅ ԻՁՁԱՇՄՅ ԿՅ ԷՁՌ՝ ՌՅ ՍՅ ՌՇՐ)

**Գ. Խանենց**  
05.09.1993

### Արշալիր Սկրտիչ

Արշալիր Սկրտչեանը ծնել է Իրանի Եազդ քղաքում 1913 թականին: Կրթութիւնը ստացել է Թեհրանի Ամերիկեան Կոլէջում:

Հիմնադիր անդամներից է «Նոր Էջ» Գրական խնամակցութեան: Մասնակցել է «Նոր Էջ» պարբերագրքի ամեն համարներին: Իր քերթածների առաջին ժողովածուն հրատարակել է 1957-ին որպէս «Նոր Էջ»-ի մատենաշատ, իսկ 1960-ին խմբագրել է «Նոր Էջ» թիւ 12 պարբերագիրքը:

Արշալիրը արդիական Նորարար Բանաստեղծ էր: Իր կեանքի վերջում անելի քան տասը տարի էր, որ հաստատել էր Ամերիկա: Նախասարդ ամսագրի (Լոս Անջելես) խմբագրական կազմի անդամներից էր: Նրա քերթածների վերջին ժողովածուն հրատարակեց Լոս Անջելեսում 1984-ին: Արժեքատր քարգմանութիւններ են Արշալիրի վերջին տարիների հրատարակած գրքերը՝ «Հատընտիր ամերիկեան չափածոյ գրականութիւնից» եւ «Երեք քերթած Թ. Ս. Էլիոթից»:

### Ռ. Բէն

Բուն անունով Ռուբէն Յովհաննիսեան, ծնել է 1916 թականին, Թեհրանում: Նախնական կրթութիւնը ստացել է ազգային դպրոցում, իսկ բարձրագոյնը՝ Թեհրանի համալսարանի ճարտարապետական Ֆակուլտետում:

1936- ին նա անդամակցում է «Նոր Էջ» գրական խմբակցութեանը եւ իր առաջին պատմաւածքը տպւում է նոյն տարւայ «Նոր Էջ» պարբերագրքում:

Ռ. Բէնը իր գրական գործունէութիւնը սկսել է պատմաւածքներով: Նրա պատմաւածքները յայտնի են իրենց կաՖկայական խորհրդաւորութեամբ: Նա ունի հարուստ ոճ եւ բարձր իմացականութիւն:

Վերջին տարիներին Ռ. Բէնը երեսն եկաւ որպէս բանաստեղծ՝ տալով լայն մտահորիզոնով խորհրդապաշտական քերթածներ:

Ռ. Բէնը՝ Չ. Միրզայեանի եւ Ա. Սալամի գրաւածքները, իրենց մահից յետոյ կազմել, խմբագրել ու հրատարակութեան է տւել «Նոր Էջ» 14 եւ «Նոր Էջ» 20 մատենաշարի անամբ:

Սպասելի է, որ Ռ. Բէնը իր գրական վաստակը առանձին գրքով հրատարակ հանի:


### Գալուստ Խանենց\* 1910

Բուն անունով Գալուստ Խանեան: Ծնել է 1910 թ. Թեհրանում: Նախնական կրթութիւնը ստացել է Ֆրանսի-

\* Նա մահացաւ 1998 թ. Թեհրանում:

ական Սէն Լուի դպրոցում եւ ապա պարսկական բարձրագոյն դպրոցներում:

Աշխատել է ճարտարապետական ասպարեզում: Չնայած Խանենցի քերթածների մի ըստար մասը լոյս է տեսել «Նոր Էջ» պարբերագրքում, նա իր գործերը հրատարակել է նոյնպէս փիլիսոփայ տարբեր պարբերականներում եւ ներկայացել է առանձին հատորներով՝ «Ամբողջ ստով», «Բարեւ քեզ մարդ» եւ «Հրաշալի գորութիւն»: Վերջին երկու գրքերը, Անմաղ Նորիզաղէի քարգմանութեամբ լոյս են տեսել պարսկերէն լեզուով եւ մեծ հետաքրքրութիւն են առաջ բերել պարսիկ գրական շրջանակներում:



### Արմեն Գեւ

Բուն անունով Վարդգէս Ֆրանգեանը, գաւակն է յայտնի մտաւորական փիլիսոփա՝ Երւանդ Ֆրանգեանի, որը արկածի հետեւանքով մահացաւ 1928- ին Համադան քաղաքում, որը թողնելով պատանի Վարդգէսին: Ծնորիլի իր մօր՝ Մարգարիտ Ֆրանգեանի հոգատարութեան, Վարդգէսը կարողացաւ բարձրագոյն կրթութիւն ստանալ Երուսալում:

Ինչպէս ինքն է գրում 1953 թականին երբ վերադարձաւ Երուսալից, իմ մտերիմ ընկերոջ յորդորով միացան «Նոր Էջ»-ի խմբակցութեան:

Արմեն Գեւը աշխատակցել է «Նոր Էջ»-ի ամեն պարբերագրքերին իր քերթածներով եւ ուսումնասիրական յօդւածներով, իսկ 1976 թականի «Նոր Էջ»-ի թիւ 18 գիրքն է խմբագրել: Այնուհետեւ նրա բանաստեղծութիւնների ժողովածուն՝ «Երեք օրեր» գիրքը, որպէս մատենաշար՝ «Նոր Էջ»-ի լոյս տեսաւ 1978-ին:

Վարդգէսն ուրիշների պէս տարիներ առաջ հաստատել է Լոս Անջելեսում եւ Նախասարդ ամսագրի եռանդուն խմբագիրներից է: Իմ մասին Վարդգէսը գրել է կենսագրական, որը այստեղ տալիս եմ նոյնութեամբ:

Խանենցը քարգմանութիւններ է կատարել Ֆրանսիացի եւ պարսիկ դասական արդիական քերթողներից: Մի որոշ շրջան նա եղել է Իրանահայ Գրողների Միութեան փոխնախագահը:

Խանենցը իր քերթածների մէջ, համամարդկային խնդիրներ է շօշափում: Տալիս է կեանքի գեղեցկութիւնը եւ հաւատում է մարդու ամենագորութեան: Նա իր պոեզիայի մէջ արտայայտում է սոցիալական գազափարներ եւ խիզախօրէն պոռթկում է բռնութեան դէմ: Յաճախ այդ գաղափարները նրա քերթածներում երեսն են գալիս խորհրդապաշտական արտայայտութեամբ:


Վարդգէս Ֆրանգեանը (Լոս Անջելես) այս կենսագրականը գրելու ժամանակ տեղեակ չի եղել, որ «Հրաշալի Չօրութիւն» գիրքը վերահրատարակել է Երեսնամում եւ իմ բանաստեղծութիւնների վերջին ժողովածուն՝ «Լուսամտ»-ը լոյս է տեսել 1993 թականին: ■

Ճար. 2 եւ

# Հոգեբանական աշխարհում

(Շարունակութիւնը նախորդ համարից)

*Մետրոպ Բալայեան  
Դոկտոր-պրոֆեսոր  
Սպահանի պետական համալսարանի*



Նաեւ, ըստ Ժան Պիաժէի, այս փուլում, որ իրականում, նախադպրոցական փուլն է, մանուկն անկարող է քանակական մտապահում ունենալ: Օրինակ՝ մի որոշ կտոր կաղապարային խմոր, երեխային թույլ է տարբեր

մեծութեամբ, համաձայն այն բանին, թէ դա զնդածն է ներկայացում իրեն, թէ երկարատուն ձողի մնան: Ըստ որում, երեխան, որպէս աւելի մեծ քանակութեան, մատնացոյց է անում երկարատուն ձողը: Մինչդեռ ձեւափոխման բոլոր գործողութիւնները կատարած է իր իսկ երեխայի ներկայութեամբ: Կամ թէ, երբ այդ փուլում գտնուող երեխայի ներկայութեամբ, երկու հաւասար անօթների մէջ լցնում են հաւասար քանակութեամբ որեւէ զուցավոր պտղի հիւք: <sup>4</sup>Այնուհետեւ, անօթներից մէկի պարունակութիւնը ամբողջութեամբ լցնում են մի ուրիշ աւելի նեղ եւ բարձր անօթի մէջ. երեխան, նկատելով բարձր անօթի հեղուկի մակերեսի բարձրութիւնը, պնդում է, որ վերջին անօթի մէջ աւելի շատ հիւք կայ: Նոյն սխալը կանի երեխան, (եթէ նոյնիսկ մինչեւ 10-ը հաշուել իմանայ). երբ նրան ներկայացնենք երկու տասնեակ փայտուն կոճակներ, (նոյնաձեւ) մէկ տասնեակը երկար շարքով եւ միւս տասնեակը խմուած եւ սեղմօրէն կենտրոնացած, նա կասի եւ կը պնդի, որ խմուած մատնած աւելի շատ կոճակ կայ: Թէկուզ իրեն թոյլ տրուի մի քանի անգամ հաշուել իւրաքանչիւր խմորի կոճակները (զգայօ-շարժողական ընկալում):

Այստեղ տեղին է արելացնել, որոշ Ռուս հոգեբաններին յաջողել է քանակական մտապահման ունակութիւն առաջացնել եւ ամրապնդել նոյնիսկ հինգ տարեկան երեխաների մօտ, նրանց չափման գործողութիւններ սովորեցնելու շնորհիւ: <sup>5</sup>

Միեւնոյն բանը կարելի է ասել նաեւ «կոնկրետ գործողութիւններ» փուլի մասին, որ ըստ Պիաժէի սկսում է եօթ տարեկանից եւ ըստ որի, նախքան այդ տարիքը, երեխան ընդունակ չէ դասակարգելու առարկաները, համաձայն նմուշ-տալոնի: Այդ բնագաւառում, մեզ թույլ է խիստ հետաքրքրական եւ նշանակալից է նաեւ Սպա-

հանի պետական համալսարանի հոգեբանական լաբորատորիայի 1965-67 թականներին կատարած հետազօտական աշխատանքները մօտ վեց հազար իրանցի մանուկների հետ, որոնք բացառապէս ցոյց տւին թէ նրանցից 75 տոկոսը ոչ միայն օժտած են քանակական մտապահման ունակութեամբ, այլ կարող են նոյնիսկ գրաճանաչ դառնալ եւ հաշուել սովորել հինգ տարեկանում, առանց որեւէ արտակարգ դժարութեան: <sup>6</sup>

Մանուկի աճման վերջին փուլը, ըստ Պիաժէի, դպրոցական տարիքն է, երբ նա սկսում է արդէն ընկալել, ըմբռնել եւ ճշգրիտ պատկերացնել սկզբում տարածութիւնը եւ տարածութեան հիման վրայ՝ ժամանակը: Հոգեբանութեան մէջ ճանաչած իրողութիւն է, որ երեխան իսկապէս, այդ փուլի սկզբնական շրջանում ժամանակը ըմբռնելու եւ պատկերացնելու համար յենակէտ է ծառայեցնում տարածութիւնը, միջոցը (Espace) եւ իր առօրեայ կեանքին առընչող, ծանօթ տեղանքը: Այսպէս՝ կրտսեր առաջին դասարանցու համար դեռ բաւական ժամանակ, ըմբռնելի ժամը սեղանի շուրջն է: Քանի որ այդ ժամերին, ընտանիքի անդամները հաւաքում են սեղանի շուրջ. իսկ, քնելու ժամը անկողինն է, որտեղ քնում են: Դպրոցում, դասը սկսելու ժամը դասարանն է եւ այլն: Մանուկի հոգեբանութեան մէջ, այս երեւոյթը կոչւում է ժամանակի զգայնշարժողական ընկալում (Perception sensorimotrice du temps):

Պիաժէի հետաքրքիր այս գիտը, մենք բազմաթիւ փորձերով վերստուգել ենք Սպահանի հոգեբանական լաբորատորիայում, հինգից վեց ու կէս տարեկան երեխաների վերաբերեալ: Նրանց ճնշող մեծամասնութիւնը, (82 տոկոս) ժամանակը սխալում էին տարածութեան հետ: Իսկ աւելի ճշգրիտ է արտայայտել այսպէս՝ նրանք ժամանակը ընկալում էին տարածութեան միջոցով: Օրինակ՝ մի սպահանցի մանուկ պնդում էր, որ իր հօրեղբայրը աւելի մօտ տեղ է ապրում՝ քան իր մօրեղբայրը, չնայած որ հօրեղբայրը պարզեց բնակւում էր Թեհրան, (420 կմ. Սպահանից) իսկ մօրեղբայրը՝ Շահրեքորը, (120 կմ. Սպահանից): Այդ սխալմունքը ծագում էր այն փաստից, որ նա իր հօրեղբորը տեսել էր ընդամենը 35 րոպէ՝ օդանաւային թռիչքից յետոյ, Թեհրանի օդանաւակայանում, իսկ մօրեղբորը տեսել էր 2.5 ժամ, մեքենայով ճամբորդելուց յետոյ, Շահրեքորում:

Եւ, ի վերջոյ, ըստ Պիաժէի, մանուկը 11-12 տարեկանում, ձեռք է բերում վերացական խնդիրների եւ երեւոյթների մասին տրամաբանելու (այս անգամ առանց չափերտների) լիակատար կարողութիւն: Չարգացման այս փուլում, կոնկրետ գործողութիւնները արդէն կարող են կիրարկել խօսքային կոնցեպցիաներին (Conceps verbaux) եւ զարգանալ անկախ, ինքնուրոյն եւ ազատ պայմաններում, առանց օգնական յենարանների եւ անթացույթների:

Մանուկը, որ արդէն դեռահաս դառնալու շեմին է, կարող է առաջադրել բացարձակ ու լրիւ վերացական խնդիրներ, եւ դեռ աւելին՝ գտնել նրանց լուծման ճամբաները:

*Շար. էջ 24-ում*

<sup>4</sup> Չուր, կամ որեւէ սպիտակ մրգի հիւք, յարմար չէ այս փորձի համար, տեսողական ճշգրտութեան տեսակէտից. նամանաւանդ, երբ փորձարկողը երեխայ է:

<sup>5</sup> Տես՝ «Տարիքային եւ մանկավարժական հոգեբանութիւն» պրոֆ. Պետրովսկու խմբագրութեամբ. թարգմանիչ՝ Ա.Ա.Նալչաջեան 1977թ. Լոյս հրատարակչութիւն Երեւան. էջ 28-29:

<sup>6</sup> Տես՝ «Սովետական Հայաստան» ամսագիր, թիւ 11, 1979թ. էջ 25-29, յօդած՝ Սպահանի հոգեբանական լաբորատորիան:

## Մարզական

«Շախմատիստը հնարաւորութիւն է ունենում... պայքարելու եւ յաղթելու ստեղծւած խոչընդոտները վերացնելու համար»

### Շարքագրոյց Ալֆրէդ Բալայեանի հետ

**Ն.-Կը խնդրենք ներկայանալ մեր ընթերցողներին:**

**Պ.-**Ալֆրէդ Բալայեան, ծնել եմ 1972 թականին Թեհրանում: Շախմատով զբաղել եմ 13-14 տարեկանից՝ ընկերոջս Ադիս Իսաղուլեանի միջոցով, հէնց նա էլ ինձ սովորեցրեց շախմատը: Շախմատի մարզածելը Իրանում օրինակնացումից յետոյ մասնակցել եմ «Միփան» միութեան շախմատի բաժանմունքի փորձերին: Մասնակցել եմ տարբեր մրցոյթների: 1990 թականին Թեհրանի առաջնութեան բարձր տարիքային մրցոյթներին մասնակցելով՝ 7 միաւորից իմ հաշիւն գրանցեց 5-ը: Դա պատճառ եղաւ իրաւունք ստանալ Իրանի երիտասարդների առաջնութեան մրցոյթներին մասնակցելու, որտեղ էլ առաջին հանդիսացայ (Դա Իրանի յեղափոխութիւնից յետոյ առաջին երիտասարդական պաշտօնական մրցոյթն էր՝ երկրի մասշտաբով): 1991 թականին Թեհրանի երիտասարդական բաժանմունքի մրցոյթներում 3-րդ տեղին արժանացայ: Այնուհետեւ զինծառայութեան գնացի: Չինորական ծառայութեան ընթացքում եղայ «Պաշտպանութեան Չինարդիւնաբերութեան» բաժնի թէ՛ մարզիչ եւ թէ՛ հասարականի անդամ: Չինորական ծառայութիւնս կատարելոց յետոյ, 4-5 տարի որեւէ մրցոյթների չեմ մասնակցել: Այնուհետեւ էլ աշխատել եմ որպէս մարզիչ:



10 տարեկանից «Միփան» միութեան անդամ եմ եղել՝ աշխատելով թատերական, նկարչական, սկաւտական եւ մարզական բաժիններում:

**Ն.- Ինչո՞ւ յատկապէս ընտրեցիք շախմատը:**

**Պ.-**Պայքարելու ամենայարմար մարզածելը շախմատըն է մանաւանդ մտային առումով: Ես անձամբ փորձել եմ բասկետբոլը, թեթևատէտը եւ ուրիշ շատ մարզածեւեր, բայց որեւէ մէկի մէջ շախմատի նման ընդունակութիւն չեմ ունեցել: Որքան ատելի շատ եմ զբաղում շախմատով, նոյնքան իմ մէջ զարգանում է սէրը հանդէպ այդ մարզածեւին: Շախմատը աշխարհում ընդունւած է նաեւ որպէս գիտութիւն եւ արեստ: Եւ իրօք դա այդպէս է: Իմ կարծիքով շախմատը առիթ է տալիս որ մարդն իր գիտական առաւելութիւնը թելադրի միւսին՝ դէմ- դիմաց եւ անգիջում պայքար տանելով:

Շախմատիստը հնարաւորութիւն է ունենում շնորհիւ իր մարզածեւի՝ կեանքի բոլոր դիրքերում եւ ասպարէզներում պայքարել եւ յաղթել ստեղծւած խոչընդոտները վերացնելու համար:

**Ն.- Ի՞նչ տխրօսների էք արժանացել շախմատի ասպարէզում:**

**Պ.-**Վերոյիշեալ յաջողութիւններից բացի, մասնակցելով տարբեր մրցոյթների, օրինակ՝ «Դահէ Գաջր»-ի երիտասարդական բաժանմունքի մրցոյթներին՝ զբաղեցրել եմ 3- 8 տեղերը՝ 1990 թականին:

**Ն.- Ուլքե՞ր են եղել ձեզ աստարդները:**

**Պ.-** Առաջին հերթին ընտանիքս է եղել ինձ քաջալե-րողը եւ թեւ ու թիկունք հանդիսացողը: Բայց բոլորից ա-ռաւել իմ յաջողութիւնը, արդիւնքն է իմ տքնաջան աշխատանքի:

**Ն.- Ներկայումս ինչո՞վ էք զբաղւած եւ ասպագայի համար ի՞նչ ծրագրեր ունէք:**


**Պ.-** Այժմ տարբեր միութիւններում շախմատ եմ դասաւանդում: Ապագայում եթէ առիթ լինի մտադիրեմ նորից հանդէս գալ՝ որպէս մարզիչ:

**Ն.- Ո՞ր միութիւններում էք դասաւանդում:**

**Պ.-**Տարիներ առաջ տարբեր ժամանակահատուածում 4 ամիսների տեւողութեամբ դասաւանդել եմ «Հայ Համալսարանական Միութիւն»-ում: 3 տարի եղել եմ «Մարդարապատ» միութեան մարզիչը: Մօտաւորապէս մէկ տարի էլ մարզել եմ «Միփանի» շախմատի խումբը եւ 4 ամիս է ինչ ԻԱՍՄ միութիւնում եմ դասաւանդում:

**Ն.- Ի՞նչ խօսք կամ պատգամ ունէք երիտասարդների համար:**

**Պ.-** Խորհուրդս երիտասարդներին այն է՝ ինչքան հնարաւոր է բարձրացնել իրենց ընդհանուր մակարդակը, տարբեր գիտելիքներով եւ կեանքում լինել յուրօք, աշխատասէր եւ հետետողական: Նրանք իրենց ընտրութիւնները պէտք է կատարեն ըստ իրենց ընդունակութիւնների: Մարզանքի ասպարէզում էլ նոյնը պիտի անեն: Ընտրած մարզածելը պէտք է նրանց հոգեկան բաւարարութիւն



տայ:


**Ն.- Դուք ասացիք, որ միութիւններում էք դասաւանդում, ինչպէ՞ս էք գնահատում այդ դասարանների մակարդակը եւ ի՞նչ առաջարկ ունէք դրանց բարելաման համար:**

**Պ.-**Եթէ ընդհանուր մակարդակը նկատի ունէք, ես կասեի անցեալի համեմատութեամբ իրանահայ շախմատ-ը վերելք է ապրել: Սակայն մարզիկների այդ յաջողու-թիւնները մեծ մասամբ իրենց անհատական ջանքերի շնորհիւ է եղել: Պէտք է տարածել շախմատը բոլոր հայ-կական միութիւններում: Պէտք է միութիւնները ունենան իրենց թիւր եւ օժանդակեմ ցանկալի յաջողութիւնների հասնելու համար:

# Մարզական

## ՖՈՒՏԲՈԼԻ ԸՆԵՐԱԳԻՏԱՐԱՆ

**ԲՈՒՂԱՐԻԱ-** Ֆուտբոլի Ֆեդերացիան ստեղծել է 1973թ. ՖԻՖԱ-ի անդամ է 1924-ից: Խոշորագույն մարզադաշտը «Վասիլ Լեսկի» (Մոֆիա)՝ 70.000: Երկրում կայ 441.000 Ֆուտբոլիստ, որից 750-ը արհեստավարժ: Բուլղարիայի հաւաքականը (մարզագգես-տը՝ սպիտակ մարզաշապիկ, կանաչ վարտիք, կարմիր զանգապաններ) 1968թ. օլիմպիական խաղերի 2-րդ մրցանակակիր է, 1956-ին՝ 3-րդ: Աշխարհի առաջնութիւններում լուսագոյն ցուցանիշը՝ 4-րդ տեղ (1994): Բուլղարական Ֆուտբոլին բնորոշ են Ֆիզիկական բարձր պատրաստականութիւնը, արագութիւնը: Առաջատար ակումբներն են ԲԿՄԱ-ն, «Լեսկի Սպար-տակը», «Սլավիան»: Լուսագոյն խաղացողները՝ Բոնեւ, Պե-նեւ, Ասպարուխով, Կոլեւ, Ժեկով, Դերմենջիեւ, Ստոիկով, Բայակով, Կոստադինով, Լեչկով եւ ուրիշներ: Լուսագոյն մարզիչը՝ Պենեւ:



պատրաստել է իտալացի ոսկերիչ Միլիո Գազանիզան: Գաւաթն ունի 36սմ բարձրութիւն եւ կշռում է 5կգ: Գաւաթներ են խաղարկւում նաեւ Եւրոպայի եւ այլ աշխարհամասերի երկրների չեմպիոն ու գաւաթակիր քիմների միջեւ: Լայն ճանաչում ունեն Եւրոպայի գաւաթների խաղարկութիւնները՝ չեմպիոնների, գաւաթակիրների եւ ՈՒԵՖԱ-ի (նախկինում՝ «Տօնավաճառների գաւաթ») գաւաթային մրցա-շարքերը, որոնց մասնակցել է նաեւ Երեւանի «Արարատը»: Աւանդաբար տեղի է ունենում վերնագաւաթի (չեմպիոնների չեմպիոնի ու գաւաթակիրների գաւաթակրի միջեւ) խաղար-կութիւն: Աշխարհի ակումբային ուժեղագոյն քիմն ի յայտ է բերում Եւրոպայի եւ Հարաւային Ամերիկայի («Լիբերտա-դորեսի գաւաթ») չեմպիոնների մրցապէճում. յաղթանակած ակումբին յանձնում է միջմայրցամաքային գաւաթը: Երիտասարդական, պատանեկան միջազգային ու ներ-քին բազմալիսի մրցումներում եւս խաղարկւում են գաւաթ-ներ: Տարբեր ցուցանիշների համար գաւաթներով պարգեւատրւում են առանձին Ֆուտբոլիստներ: ■

**ԳԱՍՏԵԱՆ ՊՊՂՈՍ** (ծնւ. 1961թ.)- Կիսապաշտպան: Սպորտի վարպետ: Տեխնիկայէ լաւ պատրաստած, գնդակը հմտօրէն վարող Ֆուտբոլիստ: 1982-84թթ. եւ 1991թ. Երեւանի «Արարատի» կազմում հանդէս է եկել ԽՍՀՄ առաջնութեան բարձրագոյն խմբում: Անցկացրել է 126 խաղ, խփել 15 գոլ: Խաղացել է նաեւ Արմիանի «Կոտայք», Ստե-փանակերտի «Ղարաբաղ» քիմերում: 1991թ. ՀՀ անդրամիկ առաջնութիւնում Երեւանի ՀՄԷՄ-ի կազմում նաեւ է չեմպիոնի կոչում:

### Շարքագրոյց՝ Ալֆրեդ...

**ԳԱՍՏՅԱՆ ՍԷՅՐԱՆ** (ծնւ. 1943թ.)- Յարձակող: Սպորտի վարպետ: Ֆիզիկայէ լաւ պատրաստած, աշխա-տասէր Ֆուտբոլիստ: 1961, 1963 եւ 1966-67թթ. Երեւանի «ՄԵպարտակ», «Արարատ» քիմերի կազմերում հանդէս է եկել ԽՍՀՄ առաջնութեան բարձրագոյն խմբում: Անցկաց-րել է 42 խաղ, խփել 9 գոլ: 1965թ. ԽՍՀՄ առաջնութեան առաջին խմբի մրցաշարի յաղթող եւ փոքր ոսկէ մեդալակիր: ՀՀ վաստակաւոր մարզիչ: Աշխատել է Ֆուտբոլի Երեւանի քաղաքային եւ հանրապետական դպրոցներում, աճեցրել շնորհալի խաղացողներ:

**Ը.- Գիւտք**, որ մեր ներկայ համայնքում գոյութիւն ունի արտագաղթի տհաճ երեւոյթը, ի՞նչ կատք դրա մասին:

**Պ.-** Այն ինչ յայտնում եմ իմ անձնական տեսակէտն է: Մենք հայերս սովորութիւն ունենք երբ մէկը մի քայլի է դիմում, միւսներն էլ հետեւում են նրա օրինակին: Սա մի սխալ սովորութիւն է, որը պիտի վերացի: Նման հարցե-րում ամէն մարդ ըստ իր պայմանների պիտի որոշում կա-յացնի:

**Ը.- Վերջում եթէ որեւէ խօսք ունէք ուղղած մեր ընթեր-ցողներին, կը խնդրենք արծարծել:**

**Պ.-**Նախ շնորհակալութիւն եմ յայտնում այն բոլոր մի-ութիւններից, որտեղ առիթ եմ ունեցել աշխատելու՝ իրենց բարիացական վերաբերմունքի համար: Նրանք որեւէ ջանք չեն խնայել աշխատանքի ասպարէզում մեզ օգնելու համար: Նրանց ցուցաբերած վերաբերմունքի շնորհիւ մենք աչքառու յաջողութիւնների ենք հասել: Առաջարկում եմ մեր պատանի եւ երիտասարդ սերնդին, որ շախմատի նկատմամբ համբերատար լինեն եւ պատահական ու սկզբնական անյաջողութիւններից չհիասթափուեն: Միւս ցանկութիւնս այն է, որ մեր համայնքի բոլոր միութիւննե-րում մարզող շախմատիստները իրար շուրջ համա-խըմբեւն, որը կը նպաստի մեր մարզանքի մակարդակի բարելաման գործին: Յաւօք մինչ այժմ նրանք չեն կա-րողացել միմեանց հետ լեզու գտնել: Տայ Աստուած, որ այսուհետեւ նրանց համախմբւած տեսնենք: ■

**ԳԱՄԱԹ** մրցանակ, առաւելապէս՝ ունկաւոր անօթի տեսքով: Տրում է մրցումների յաղթողին, որը կոչւում է գաւաթակիր: Աշխարհի երկրներում գաւաթների խաղարկութիւններ անցկացւում են առաջնութիւններին սեղմ քանակով, օլիմպի-ական մրցակարգով: Ամենապատուաւոր մրցանակն, իհարկէ, խաղարկւում է աշխարհի առաջնութիւններում: Աշխարհի առաջին գաւաթը, որը յետագայում կոչեց ՖԻՖԱ-ի նախագահ, համաշխար-հային Ֆուտբոլի մեծ երախտաւոր Ժիլ Ռիմէի անունով, պատկերւած էր յունական դիցաբանութեան յաղթանակի քեւաւոր աստուածուհի Նիկէի տեսքով: Դա 30սմ բարձրու-թեամբ ոսկէ արձանիկ էր եւ կշռում էր 1կգ 800գ (օճիքսէ պատւաճառով 4կգ): Այն քանդակել էր Ֆրանսիացի ոսկե-րիչ Աբել ԼաՖլեօրը: Ժիլ Ռիմէի Գաւաթը, ՖԻՖԱ-ի կանո-նադրութեամբ, ընդմիջաւ ի պահ էր տրւելու այն հաւաքակա-նին, որը երեք անգամ կը դառնար գաւաթակիր: Այդ յաջո-ղութեանը 1970 հասաւ Բրազիլիան: Գա-ւաթը 1983-ին հափշտակեց Ռիօ դէ Ժանէրոյում, ու հետքն այդպէս էլ չգտնեց: Զուլեց «Ոսկէ աստուածուհու» կրկնօրի-նակը: Ֆուտբոլի միջազգային Ֆեդերա-ցիան 1971թ. սահմանեց նոր, արդէն փոխանցիկ մրցանակ՝ ՖԻՖԱ-ի աշխար-հի գաւաթը: Այն, երկրագնդի պատկերով, մաքուր ոսկում

### Շարքագրոյցը վարեց՝ Թամիկ Բեշիշեանը

## Ժամանց

# ԽԱՉԲԱՌ- ՀԱՄԱՐ 11

Կազմեց՝  
Գագիկ Անդրեասեանը

## ՇՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Հայոց սպարապետական ընտանիքը- «... լալա մահարի» Ա. Բսահակեանի յայտնի պոեմներից:
2. Ընդունել, հաւանութիւն տալ- անցողիկ ուշադրութիւն:
3. Լիքը, շատ - Պարսից ծոցի կղզիներից:
4. Պատմական Հայաստանի մահանգներից - դեռեւս մուշ չի դառել:
5. Աջից չորրորդ մտան - տարի - տարբեր:
6. Ծառի մասերից - երագ, ցնորք:
7. Կրկնաձ ճայնատր - ոտքից տկարմուգ կարմիր:
8. Կենդանու տեսակ - աջից մատակ:
9. Ոչ- մուգ կարմիր - դրա գնով են ձեռք բերում ազատութիւնը:
10. Ամերիկայի միացեալ մահանգներ - Վրաստանի հայաբնակ քաղաքներից:
11. Աջից ԱՖրիկայի երկրներից - երկինչիւն է - տան տիկնոջ առօրեայ գործերից:
12. Արական անուն - հենց այժմ:
13. Արական անուն - ուժեղ անձրեւ:
14. Կէտ - առանց ուսում - կտրւած պոչ:
15. Գատարկ ու փուշ- հայթայթել, պատրաստել:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1															
2															
3															
4															
5															
6															
7															
8															
9															
10															
11															
12															
13															
14															
15															

ԼՈՒՅԷ  
ԽԱՉԲԱՌԸ

ՍՏԱՅԷ  
ՆԻՐ

## ՈՒՂԱՇԱՅԵԱՑ

- 1- Հայաստանի յայտնի դերասաններից, որը այս վերջերս կնքեց իր մահկանացուն:
- 2- Կրկնաձ ճայնատր - ժողովրդական լեզուով հօրեղբայր է նշանակում:
- 3- Միս ծախող - կենդանի էակ:
- 4- Անգլոյիս ծիտ - Իրանի հարեւան երկրներից մէկին պատկանող - արական անուն:
- 5- Արեւմտեան Հայաստանի քաղաքներից - բողոք:
- 6- Մարմնի սինը - քնել:
- 7- Օրգանապէս քայքայում- կերակուրի համեմներից - կեղտ, անմաքրութիւն:
- 8- Բարձրացիր - առողջամիտ- դերանուն է:
- 9- Ճաղատ, քաչալ- սահմանաձ, վերապահաձ:
- 10- Դերանուն է- իրագործել-ասելու հրամայականը:
- 11- Հրապուրել, գրաւել- տնային թռչուն:
- 12- Արքայախնձոր (օտար) - երբէք - այնուհետեւ, յետոյ:
- 13- Հերիք - ճարպիկ- մտամներից- որովայն:
- 14- Մոռանալ ու հերքել- երկաթուղի:
- 15- Մկրտութիւն- կրկնաձ քաղաձայն- պտուղի տեսակ:

Խաչբառ համար 10-ի  
լուծած տարբերակը  
տեսնել՝ էջ 13-ում:

# Ժամանց

## Դեկտեմբեր



Դեկտեմբերը հին հռոմեացիների 10-րդ ամիսն էր (մարտից հաշվելով), դրա համար էլ կոչում էր (december) «տասներորդ» (decem «տասը»), լրի անվանումով՝ december mensis «տասներորդ ամիս»:

Հայերենի դեկտեմբեր-ը եւ շատ լեզուների համապատասխան անվանումը, ուրեմն, december-ից են. անգլերեն December, Ֆրանսերեն decembre, գերմաներեն Dezember: Անգամ հին յոյները լատիներենից են վերցրել իրենց դեկեմբրիոս-ը (նոր յունարեն դեկեմբրիոս): Հայերենի եւ ռուսերենի ձեւերն են, որ մի քիչ տարբեր են լատինականից եւ մօտ՝ յունականին: Հայերեն դեկտեմբեր-ի Կ-ից յետոյ Տ-ի «մուծումն» ըստ երեսոյթին պէտք է բացատրել «հարեան» անսանուններից սեպտեմբեր-ի ու հոկտեմբեր-ի ազդեցութեամբ:

Հայկական շարժական տոմարում տարւայ վերջին ամսին անվանում էր հրոտից կամ հրորտից: Մա նոյնպէս գալիս էր իրանեանից եւ այդ լեզուներից մի քանիսում հնչում էր Ֆրաւարտիկաան, Ֆրաւարդիյաան Ֆրաւարդազաան ու մնան ձեւերով:

Իրականում իրանեան ցեղերի ներկայացուցիչներն այդպէս կոչել են ոչ թէ ամբողջ ամիսը, այլ տարւայ վերջին իրենց հաշումներով «աւելացած» 5-6 օրերը: Ահա թէ ինչու վերոյիշեալ բառերը փաստօրէն նշանակել են «աւելեաց», այսինքն՝ «աւելացած»:



## Հումոր

- Մայրիկ, ուզում եմ ծովում լողալ:
- Չի կարելի, աղջիկս, սարսափելի վտանգատուր է: Միթէ չե՞ս տեսնում, թէ ծովը ոնց է ալեկոծում:
- Բա հայրիկը ինչպէ՞ս է լողում:
- Հայրիկի կեանքը ապահովագրւած է:



- Չայրացուցիչ է. ձեր շունը կերել է իմ հաւը:
- Շնորհակալութիւն, որ նախագգուշացրիք, այսօր ընթրիքին ես նրան չեմ կերակրի:



- Միայն իմ մահուանից յետոյ աշխարհը կը զգայ, թէ ինչպիսի մեծ կորուստ է ունեցել:
- Միթէ քո պարտքերը այդքան շա՞տ են:

## Ասացածքներ

- Խելքը ոսկէ թագ է, ամէն մարդու գլխին չի լինում:
- Մարում վագր չկայ, շանն են ասում արքայ:

## ԱՖորիզմ

Մարդկանց հետ խօսիր նրանց բանականութեանը համապատասխան:

Սաարի

✓ Իւրաքանչիւր մարդ երեք բնատրութիւն ունի՝ այն որ նրան վերագրում են, այն, որ նա ինքն է իրեն վերագրում եւ վերջապէս այն՝ որ իրականում կայ:

Վ.Շիւզօ

## Ինչո՞ւ է փեսան հարսի ձախ կողմում կանգնում

Սովորաբար փողոցով քայլելիս տղամարդը կնոջ ձախ կողմից է քայլում: Այս սովորոյթը ունի իր պատմութիւնը:

Երկու-երեք հարիւր տարի առաջ տղամարդիկ առանց գէնքի տնից դուրս չէին գնում եւ նրանց ձախ կողմից կախած էր լինում սուրեր կամ դաշոյն: Որպէսզի քայլելու ժամանակ կախ ընկած գէնքը չփայչէր կողքից քայլող կնոջ ոտքերին, տղամարդիկ անցնում էին նրանց ձախ կողմը: Աստիճանաբար սա սովորոյթ դարձաւ:



Այժմ էլ քանի որ մեր երկրում շարժումը աջակողմեան է (մեքենաները դիմացից եկող մեքենայի աջ կողմից են անցնում, կամ մարդիկ դիմացից եկողի աջ կողմից են քայլում), տղամարդիկ շարունակում են հին սովորոյթը եւ քայլում են կնոջ ձախ կողմից, որպէսզի դիմացից եկող անգզոյշ անցորդը դիպչի իրեն եւ ոչ թէ կնոջը: Այսպիսով պաշտպան են կանգնում իրենց հետ քայլող կնոջը կամ ընկերուհուն:

Այս կանոնին այժմ չեն ենթարկում միայն զինուորականները, երբ համազգեստով են, որպէսզի երբ դիմացից զինուորական է գալիս, շտապ ողջունեն եւ այդ ընթացքում արմունկով չխփեն իրենց հետ քայլող կնոջը: Ուստի նրանք քայլում են կնոջ աջ կողմից:

## Հանելուկ




Ունի չորս ականջ, երկու փոր:

(ԳՎՄԴ)

## Երիկամներ

Երիկամները դասում են հարուստ հանքավայրերի թիւն, բժիշկները երիկամներից արդիւնահանում են քար, աւազ եւ այլ շինանիւթեր:



# ԼԱՅԿԱ-2-Ը «ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՐԱԲՆԻՆ» (Ֆանտաստիկ կատակ)

Պրոֆ. Ռ. Ղազարեան

Դ-ա պատահեց Վեդա մոլորակի վրայ 2098 թ.-ի ամռանը:

Ոհմի ռազմատենչ ցեղի առաջնորդ և Գոռոյ դաժան աստծոյ քրմապետ Մուռոն մտայ էր ու մտազբաղ: Ուժի ու կեղծիքի վրայ հիմնած նրա դիրքը վերջերս երերացել էր: Նրա հեղինակութեանը յատկապէս ուժեղ հարած էր հասցրել ռամիներից կրած պարտութիւնը: Ո՞վ էր սպասում, որ ողորմելի այդ հողագործները այդպիսի կատաղի դիմադրութիւն և խիզախութիւն կը ցուցաբերեն...



Մուռոն զգում էր ցեղի ներսում աճող խուլ դժգոհութիւնը: Եղան անգամ ընտանիքներ, որ թողեցին ասպատակների քոչուր կեանքը եւ միացան հողագործ ռամիներին: Ասում են, ռամիները նրանց լաւ են ընդունել: Եթէ այդպէս շարունակուի, շուտով ամբողջ ցեղը կը ցրուի: Անհասկանալի և վշտացնող էր Գոռոն աստծոյ բռնած դիրքը՝ ինչու՞ է նա երես դարձրել իր հաւատարիմ ծառայից: Ինչպէ՞ս է հանդուրժում ռամիների խղճուկ աստծոյ յաղթանակը: Ո՛չ, դա երկար չի կարող տևել: Գոռոն օգնութեան կը գայ իր հաւատարիմ ծառային: Մուռոն ակամայ երեսը դէպի երկինք դարձրեց, իր աղերսանքն ուղղելով գեղեցիկ կապտաւուն աստղին... Եւ հենց այդ պահին նկատեց դանդաղօրէն ցածրացող արծաթափայլ մի մարմին: Հրճանքի ու երկիւղի զգացումներով համակուած՝ Մուռոն վեր ցատկեց և մոլեգին աղաղակելով վազեց դէպի վայրէջք կատարող «Աստածը»: Նրա ետեւից վազում էր համարեա ամբողջ իր ցեղը:

Չնայած ցուցադրովի իր մոլեռանդութեանը, Մուռոն հոգու խորքում շատ քիչ յոյսեր էր տածում իր աստծոյ իրական օգնութեան նկատմամբ եւ այն, որ Գոռոն լսեց օգնութեան հասնելու իր աղօթքը, խորը հպարտութեամբ էր ւրբել Մուռոյի սիրտը:

«Աստածային» մարմնի վրայ ինչ-որ խորհրդանշաններ կային: Ու, մինչդեռ Մուռոն տենդագին մտածում էր, թէ ի՞նչ կը նշանակեն դրանք, մարմնի ներսում չխկոց լսեց, բացեց մի կլոր դռնակ, որի մէջ սկզբից յայտնուեցին երկու փոքրիկ սպիտակ թափիկներ և ապա Լայկա-2-ի հանրայայտ ժպտաղէմ դուռը:

Առաջին իսկ հայեացքը խորը հիասթափութիւն պատճառեց Լայկային: Նա համոզուած էր, որ իրեն կը դիմաւորեն սպիտակ խալաթներ հագած իր բարեկամները: Մինչդեռ նրան շրջապատել են բոլորովին անծանօթ և տարօրինակ դէմքեր: Յատկապէս կասկածելի է այդ մէկը, որ ոռնում է և անճոռնի թռիչքներ գործում: Ժպիտը չբացաւ Լայկայի դնչից, նա սրեց ականջները, լարած հետեւելով Մուռոյի գործողութիւններին: Որտեղից իմանար Լայկան, որ Մուռոն ներկայացնում է իրեն իբրեւ Գոռոն աստծոյ պատգամատր եւ խրախուսում ոհմիներին նոր պատերազմ սկսել ռամիների դէմ հենց իր Լայկայի, առաջնորդութեամբ: Լայկան հետզհետէ յանգում

էր տրամաբանական այն եզրակացութեան, որ Մուռոն «ձեռ է առնում» իրեն: Ու, քանի որ, Լայկան լի էր արժանապատուութեամբ և սովոր յարգալից վերաբերմունքի, ապա երբ Մուռոն թնրկահարելով և թռչկոտելով սկսեց մօտենալ, Լայկան կորցրեց իր համբերութիւնը, բարձր հաշտուցով դուրս թռաւ հրթիռի խցիկից ու յարձակեց Մուռոյի վրայ: Նա ցոյց կը տայ այդ անկիրթին, որ իզուր է իրեն փողոցային ինչ-որ շան լակոտի տեղ դրել: Լայկան վրայ հասաւ եւ չանթեց Մուռոյի ոտքը: Մի պահ քարացած մուռոն ցաւից ճչաց, ապա լեղապատառ փախուստի դիմեց: Լայկան հետապնդեց նրան մինչև ծառերը ու պոչը յաղթականօրէն տնկելով հպարտ ետ վերադարձաւ: Ամբողջ ցեղը ահաբեկուած երեսնիվայր գետին էր ընկել: Միայն փոքրիկ Տառն, տեսնելով թէ ինչպէս է փախչում այդ չար Մուռոն, ծափ էր տալիս ու ծիծաղում: Լայկան զննող հայեացք գցեց շուրջը և մօտենալով ծառին կատարեց ծիսական այն գործողութիւնը, որը՝ ծառ տեսնելիս չի զլանում ոչ մի շուն: Յետոյ վճռականօրէն սկսեց թափելով փոքր գետիկներ, որպէսզի ոչ մի հետք չմնայ:

Այդ ժամանակ ցեղի ամենախմաստուն ծերուկը բարձրացաւ և ասաց. «Ո՞վ աստծոյ պատգամատր, մենք հասկացանք կամքդ՝ դու դէմ ես պատերազմին և ուզում ես, որ մենք հողագործութեամբ զբաղուենք: Մենք կը կատարենք այն»:

Հենց այդ պահին Լայկան անցնում էր փոքրիկ Տառնի կողքով, որը պարզեց իր ձեռքը և շոյեց նրան: Լինելով կիրք շուն, Լայկան կանգ առաւ, ժպտաց և արագ թափ տալով պոչիկը, համբուրեց Տառնին՝ այսինքն կրպ-ցրեց նրան իր խոնաւ դուռը: Տառն հաճոյքից նորից ծիծաղեց:

- Ո՞վ աստծոյ պատգամատր, - նորից խօսեց ծերուկը, - դու փոքրիկ Տառնին ես ընտրում քո կամակատար և մեր առաջնորդ: Մենք կը կատարենք քո այդ պատգամը եւ:

Վեդա այցելած երկրորդ արշաւախմբի անդամները պատմում են, որ Լայկա-2-ը մինչ օրս աստծոյ պաշտօնակատարն է ոհմի ցեղում, որը այժմ հողագործութեամբ է զբաղում և բնակութիւն է հաստատել Լայկայի վայրէջքի տեղում: Նա ցեղի բոլոր անդամների խորը յարգանքն ու սէրն է վայելում: Մակայն նրա ամենամտերին բարեկամը և անբաժան խաղընկերը փոքրիկ Տառնն է՝ ոհմի ցեղի մանուկ առաջնորդը: ■

## ԱՆՏԱՐԿՏԻԴԱՆ ՍԿՍՈՒՄ Է ՆԱԲՐԿԵԼ (Գիտական Ֆանտաստիկա)

Հիմա դժար է պնդել, բայց հաւանաբար, առաջիններից մէկը, որ նկատել է դա եագանների անհետացող ցեղի միայնակ, թշուա ծերուկն էր:

Մթնով դուրս սողալով Կրակէ Երկիր կղզու վրայ թառած ու Աստծու կողմից մոռացած աշխարհի ամենահարաւային Ուշուայեա քաղաքի ծայրամասում մետաղաթիթղներից մի կերպ կայցրած իր «պահածոյի ամանից», Պանչոտէն ուղեւորեց խղճուկ որսի՝ ոստրէներ, խեցիներ և մանր ձկներ հաւաքելու, որոնց ափ էր շարտում ովկիանոսի ալիքը: Պէտք էր կանխել ժրգոյն տողը և մեծա-

# Երիտասարդի համար

հասակներին, որպեսզի քաղցած չմնար: Ուտքերը քարշ տալով փոքրիկ Բիդոնիլի մետաղեայ հիդերի կողքով, նա դուրս եկավ Ուշուայեա քաղաքը կազմող երկու փողոցներից մեկի վրայ և ծուռտիկ ու կարճ ոտքերի վրայ երեքալուր, դանդաղ քայլեց դեպի ծով, անցնելով փայտե աղբատիկ տների և միակ եկեղեցու կողքով:

Ծովափ դուրս գալով, նա սկսեց սովոր շարժումներով փնտրտել քարերի մեջ, երբ լսեց հեռից եկող, արագորեն աճող գուռ: Անհանգստությունը պատեց ծերուկին, բայց արդեն ուշ էր: Հսկայ ալիքը ճեպընթացի արագութեամբ սրբելով ամեն ինչ ջարդուցրի արեց նրան՝ խփելով ժայռաբեկորներին...

Կառուշկարների և Եազանների ցեղերի մարդիկ, որոնք քարշ էին տալիս ողորմելի գոյությունը Ուշուայում, ինչպես նաև Էստադոս, Նաւարինո, Օստե և այլ կղզիներում, մտնելով ափին, ուր երբեք չէր հասնում ովկիանոսի ալիքը, ցնծացին՝ յայտնաբերելով դեռևս թարտացող մանր ու մեծ ձկների անհամար քանակություն:

Մեծահասակներն անգամ չէին յիշում, որ մշտապես քաղցած մարդիկ այդքան կուշտ կերած լինէին: Ծերուկին յիշեցին միայն մի քանի օր յետոյ և շուտով էլ մոռացան:

Շարժելով դեպի հիսիս ալիքը կորցնում էր թափը, այնպես որ, հասնելով քաղաքակիրթ ափին այն մեծ ցընցում չառաջացրեց:

Ամառային այն փետրաբեան առաօտ Անտարկտիկական թերակղզու, Ուեդելլի և Բելինսհամուզեի ծովերի, ինչպես նաև Մոդ թագուտու Երկրի շրջանում բոլոր գիտահետազոտական կայանների սեյսմոգրիչների վրայ գծագրել էր միայնակ կատար՝ ստորգետնեայ ցնցումներին յատուկ տրոցաձեւից տարբեր:

Չգիտես ինչու Տոլիլը՝ Խորհրդային կայանի ռադիոտըն ու սեյսմոլոգը նայելով ժապատներին, յիշեց բրիտանական կայանի ռադիոտ Դէյի տարակուսանքով լի բացականությունը ցածր, խիտ կծիկի մնան ամպի մասին, որը հետո հորիզոնով, որտեղ ափը ճուլում է օվկիանոսի հետ, շարժում է անբնականորեն ուղիղ գծով: Տոլիլի կատակով տուած հարցին, թե քանի աստղ կար նախաճաշին Դէյի խնամ կոմպոտի մեջ, վերջինս թթի տակ հարազատ անգլերենով Տոլիլին անհասկանալի իրիտ գոռոց: Քանի որ Դէյը միակը չէր, որը նկատել էր «վագող մշուշը», ապա բրիտանական կայանի խորհուրդը որոշեց «հետախուզութեան» ուղարկել երեք աշխատակիցներից կազմուած անձնակազմ: Մեկնեցին ռադիոտ Դէյը, երկրաՖիզիկ, նոյն ինքը՝ վարորդ Չէյմսը և ովկիանոսաբան Մարտինը: Երբ մինչև ափ երեք կիլոմետրից էլ քիչ էր մնացել, Չէյմսը զարմացած բացական էր և կտրուկ արգելակեց: Միմեանց հետ գրուցող Մարտինն ու Դէյը անակնկալությամբ առաջ գլորեցին, բայց նայելով այն կողմ, ուր սեւեռել էր Չէյմսի հայեացքը, կտրեցին իրենց դժգոհ փնթփնթոցը... Մի կիլոմետր այն կողմ, իրենց շարժման ճախ կողմով, անշտապ մտնեցին էր մի խիտ սպիտակ ամպկծիկ: Մի պահ քարացած մնալուց յետոյ ուշքի գալով, Չէյմսը միացրեց հետընթաց արագությունը և ամենագնացը սկսեց կամաց ետ քաշել: Բայց 100 մետր չանցած այն կանգ առաւ, քանի որ «կծիկը» կարծես մեծ աղեղ գծելով սկսեց շեղել:

## Շար. 1

## Հոգեբանական... Շար. էջ 18-ից

Այստեղից են իրենց ուղեգիրները ստանում մանուկի, դեռահասի, պատանու և արդեն կարող ենք ասել, իր լրումին հասած մարդու գրեթէ բոլոր վերընթաց ունակությունները՝ հոգեմտաոր, բարոյա-փիլիսոփական և այլն:

Ժամ Պիաժեի՝ հոգեբանութեան այս մեծ երախտատրի, մանուկի աճման փուլերի տեսությունը, իր վրայ գրաւեց շատ երկրների հոգեբանների խոր ուշադրությունը: Այդ մասին բազմաթիւ երկրներում նոր հետազոտությունների տեղի ունեցան բազմազան մեթոդներով: Ամերիկեան Միացեալ Նահանգներում, տասնութական տարիների, գրեթէ բացարձակ անտեսումից յետոյ, Պիաժեն և իր գործերը, յանկարգ, խնդրոյ առարկայ դարձան, Խորհրդային առաջին արհեստական արբանեակի (սպուտնիկ) արձակումից յետոյ (1956թ.):

Ներկայումս ԱՄՆ-ում Ժամ Պիաժեն և իր գործերը ծաւալում ուսումնասիրությունների և գիտական հրատարակությունների առարկայ են: Ինչպես քիչ վերը ակնարկեցինք՝ այդ մասին լուրջ հետազոտություններ են տեղի ունեցել նաև Խորհրդային Միությունում: Դեռ տասնեակ տարիներ առաջ, երբ նոր լոյս էին տեսել երիտասարդ Պիաժեի գիտական առաջին գործերը, նրանք արժանացան Ֆրանսիայի ակադեմիայի հոգեբան Հանրի Վալլոնի և Խորհրդային մեծ հոգեբան Վիգոթսկու թե՛ խորը և բազմաբովանդակ ուշադրութեան և, թե՛ բացայայտ քննադատութեան, մասնաւորապես դաստիարակի դերը (որպես միջնորդի՝ մանուկի և արտաքին աշխարհի մեջ), անտեսելու պատճառով:

Նաև պիտի ասել, որ Պիաժեն ևս իր նորագոյն գործերում ընդունեց թե՛ իր բացայայտած և յայտնաբերած տարիքային փուլերը՝ պահպանելով իրենց անխուսափելի յաջորդականությունը, կարող են լուրջ տեղաշարժերի ենթարկել, ըստ երեխաներին ընձեռած կրթական-դաստիարակչական միջոցների և հնարաւորությունների և նոյնիսկ ըստ այն քանի, թե իրաքանչիւր երեխայ, ի՞նչ տարիքում և ինչպե՞ս է կարողանում ընկալել և իրացնել իրեն առաջադրած տեսլները և խնդիրները:

Բայց և այնպէս, Ժամ Պիաժեի փուլերի տեսությունը մնում է կարեւոր աւանդ թե՛ մանուկի զենեակական հոգեբանութեան, թե՛ իմացաբանութեան և թե՛ կիրառական, մանկավարժական-դաստիարակչական հոգեբանութեան մեջ: ■

## Շար. 2 և վերջ

7 Այս մասին տես՝ «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն», 1977թ. Երևան, էջեր՝ 28, 29, 48 և 71, ուր առկայ է նաև, դրական կեցածք՝ հանդէպ Պիաժեի որոշ գործերը: Պրոֆ. Պետրովսկու խմբակցութեամբ: